

Ալբերտ Ա. Ստեփանյան
Պատմ. գիտ. դոկտոր

**ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒՅՈՒՅՈՒՆԸ
ՄԵՃ ՀԱՅՔՈՒՄ**

Արտաշիսյան արքունի հասարակությունը (իմաստաբանություն,
կառույց, գործառույթ)*

Մուտք

1970-ականներից ի վեր ձևավորվել է պատմական ընկերաբանության մի ուրույն տիրույթ՝ **արքունաբանությունը**: Սկզբնավորողը նշանավոր իմաստասեր և ընկերաբան Ն.Էլիասն էր¹: Նա մանրակրկիտ հետազոտության խնդիր դարձրեց Լուի XIV-ի դարաշրջանի ֆրանսիական արքունիքը և այդ հիմամբ բանաձևեց մի բավական տարողունակ գիտահղացք, որը (ինչպես ցույց տվեցին հետագա ուսումնասիրությունները) կիրարկելի է պատմական այլ դարաշրջանների և համակեցական միջավայրերի նկատմամբ²:

Խնդիրը հիմնարար է, զի միտված է բացահայտելու կառավարող և մտահոգևոր ընտրախավի տարաբնույթ ներգործությունը համակեցական ամբողջի նկատմամբ: Ընդամին, ընտրախավն ընկալվում է իբրև մի միջավայր, որտեղ կուտակվում, համակարգվում և կիրարկվում է տվյալ հանրության դրական կենսավորձը³: Հրնթացս ժամանակի վերջինս իր հերթին ծնունդ է տալիս կայուն արժեհամակարգի, որի ծիրում համաբերված են տարբեր իմաստային համալիրներ՝ կառավարման ավանդույթից մինչև քաղաքագիտություն, բարեկիրք պահվածքի կանոններից մինչև բարոյագիտություն, առտնին իմաստնությունից մինչև իմաստասիրություն, կենսական նպատակահարմարությունից մինչև գեղարվեստական ճաշակ⁴:

*Ներկա ուսումնասիրությունը լինելով հեղինակի «Քաղաքակրթական հավասարակշռությունը Մեծ Բայքուն» հոդվածաշարի (Վեմ, 2009, N 3, 2010, N 1,3, 2011, N 1) շարունակությունը, միաժամանակ **արքունաբանության** կամ **արքունագիտության** վերաբերյալ առաջին գիտական հրապարակումն է հայ պատմագիտության մեջ: Խմբ.:

1 Տե՛ս N. Elias, The Court Society, Oxford, 1983, 301p.
2 Տե՛ս J. Duindam, Myths and Power. Nororbert Elias and Early Modern European Court, Amsterdam, 1994, pp.19-21.
3 Տե՛ս N. Elias, The Court Society, pp.142-145; R.van Krieken, Norbert Elias, London/New York,2005, p. 93.
4 Տե՛ս N. Elias, The Court Societypp.236-237; A.Scaglione, Knights at Court. Courtliness Chivalry and Courtesy from Ottonian Germany to the Italian Renaissance, Berkeley, 1991, pp. 18-21.

Գ. (Թ) փարի, քիվ 4 (36) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2011
ՎԷՄ համահայկական հանդես

Դրանց բովանդակությունն ու նշանաբանությունը ծավալվում են պատմական ժամանակի երկար տևողության ծիրում: Այլ խոսքով՝ անմիջական աղերս ունեն քաղաքակրթական կառույցի հետ, որտեղ անհատը կերպավորվում է անհատականության, էքնոսը՝ ազգային ինքնության, իսկ պետությունը՝ պետականության⁵:

1. Արքունիքի իմաստաբանությունը

Արդի պատմական ընկերաբանությունն անտիկ մտքից ժառանգել է մի բավական կենսունակ նախապաշարում: Այն մեկնարկում է արքունական հասարակությունների (իսկ ավելի լայն ընդգրկմամբ, նաև՝ պետությունների) և նահապետական տան համակերպության հղացքից: Համաձայն վերջինիս՝ արքունական հասարակությունները ձևավորվում են հրնթացս պատմական զարգացման, երբ «տվյալ միջավայրի նահապետական տներից մեկն» սկսում է ծավալվել՝ ձեռք բերելով ռազմական, կրոնաժիսական, տնտեսական և քաղաքական բացարձակ գերակայություն⁶: Գործընթացն ուղեկցվում է մի կողմից **տան** տարաբնույթ գործառությունների հատակեցմամբ, մյուս կողմից՝ նրա ընդհանուր կառույցի բարդացմամբ: Ասվածն առաջին հերթին դրսևորվում է տարաստիճան ծառայանու կազմավորմամբ: Հայդմ՝ կարևոր քայլ է կատարվում վերջինիս՝ արքունի հասարակության աստիճանական վերակերպավորման ուղղությամբ⁷:

Այդ ճանապարհին առանձնակի կարևորվում է շրջակա ընկերային միջավայրից գերակա տան տարանջատման գործընթացը: Ի հետևանս՝ ամրագրվում են նրա ներքին ու արտաքին սահմանները՝ ճարտարապետական, իրավասովորութային, խորհրդապաշտական, ընկերային և այլն⁸:

Նախ և առաջ՝ ակնհայտ դրսևորում է ստանում տան տարածական տարանջատումը: Դա կատարվում է ըստ որոշակի պլանի, որը տարբեր դարաշրջաններում և տարածաշրջաններում ստանում է գործառական, գեղագիտական և ոճային տարաբնույթ լուծումներ: Այդուհանդերձ, ամենուրեք առկա են իմաստային և կառուցվածքային ինչ-ինչ հաստատումներ, որոնք էլ հնարավորություն են տալիս խոսելու զարգացման ընդհանուր միտումների մասին: Պատճառն առաջին հերթին այն իրողությունն է, որ գերակա տները, որպես կանոն, ձևավորվում են տիրոջ անձի շուրջ և նպատակ ունեն բավարարել նրա (և ընտանիքի անդամների) առտինն ու վերկենսական պահանջումները⁹: Ուստի դրանք հաճախ ունեն համանման կառույցներ. ննջարաններ, ճաշարահ, ընդունելությունների, հանդիսությունների, հանգստի և զվարճությունների սրահներ: Նաև՝ սրբատեղի: Նաև՝ խոհանոց, մառան, պահեստներ, ախոռ, արհեստանոցներ: Նաև՝ տիրոջ անմիջական շրջապատի, թիկնագորի և սպասավոր-ծառանների հարկաբաժիններ:

Տարանջատման գործընթացի խորացմամբ գերակա տունն սկսում է իր տիրապետությունը հաստատել տվյալ երկրի նկատմամբ: Դա բավական բարդ ու տևական ընթացք է, որի սոսկ վերջնական արդյունքների մասին կարելի է խոսել հստակ ձևակերպումներով: Ի շարս դրանց՝ հետազոտողները հատկանշում են

5 Տե՛ս N. Elias, The Civilizing Process. Sociogenetic and Psychogenetic Investigation, Oxford, 2000, pp. 365-378.
6 Տե՛ս M. Weber, Economy and Society. An Outline of Interpretive Sociology, Berkeley/London, v.1-2, 1978, pp.356-369.
7 Տե՛ս J. v.Kruedener, Die Rolle des Hofes im Absolutismus, Stuttgart, 1973, S.20-21.
8 Տե՛ս D. I.Kertzer, Politics and Ritual, Anthropological Quarterly, 47(1974), p.375.
9 Տե՛ս N. Elias, The Court Society, pp.217-223.

հետևյալ իրողությունը. ամբողջ երկիրը նույնպես սկսում է ճանաչվել իբրև տուն: Եվ վերջինիս նկատմամբ նույնպես տարածվում է ընտանիքի հոր իշխանությունը (potestas partis familiae): Այլ խոսքով՝ երկիրն ընկալվում է իբրև արքայի հայրենական տիրույթ (patrimonia): Եվ ինչպես ցուցանում է պատմական փորձը, նման կարգավիճակի հաստատագրման գործում կարևորագույն դերակատարությունը պատկանում է ռազմական հարկադրանքին: Այդուհանդերձ, հասարակական գիտակցության մեջ ամրագրվում է արքայի իշխանության քարիզման, համաձայն որի նրա իշխանության իրական աղբյուր ճանաչվում է աստվածային կամքը¹⁰:

Ասվածին հավելենք, որ իշխանության այս տարակերպն արդի ընկերաբանության ծիրում հաճախ բանաձևվում է իբրև քարիզմատիկ պատրիմոնիա (charismatic patrimony)¹¹: Ընդունված է կարծել, որ վերջինս պետականության կայացման, թեպետ կարևոր, բայց և միակ ուղին չէ: Հընթացս ժամանակի ձևավորվում է, այսպես կոչված՝ պաշտոնեական (բյուրոկրատական) պատրիմոնիան (bureaucratic patrimony): Խորքային իմաստով՝ «ընկերային կենսական հարաբերությունները կերպավորվում են բանական հարաբերությունների»¹²: Եվ այդ առնչությամբ ի հայտ է գալիս տարաստիճան ռազմավարչական ծառայանին՝ գործակալներ ու սպաներ, վերակացուներ ու գործավարներ, նվիրակներ ու դպիրներ: Նրանց գործառնամբ արքայից բխող իրավականային խթանները հասնում են մինչև երկրի հեռավոր ծայրամասերը: Կարևորվում է նաև հակադարձ կապը՝ ծայրամասերից մինչև արքան¹³:

Ասվածին հավելենք, որ իշխանության քարիզմատիկ և պաշտոնեական խթանները շարունակում են գործառել զուգահեռաբար: Հաճախ էլ համադրվում են՝ տարաբնույթ համամասնությամբ: Ամեն ինչ կախված է տվյալ երկրի իշխանական ավանդույթներից, կոնկրետ իրավիճակից և գործող անձանցից: Բառիս բուն իմաստով հենց այս հանգրվանից էլ սկիզբ է առնում արքունի հասարակությունը¹⁴:

Համաձայն արդի պատմական ընկերաբանության՝ արքունիքը բանաձևվում է իբրև ընկերային հարաբերությունների մի համացանց, որի հիմնական նպատակն է միմյանց շաղկապել բացարձակ իշխանությամբ օժտված միապետին և տվյալ երկրի համակեցական ամբողջը: Շաղկապել, սակայն ճշգրիտ պարագծելով նրանց բաժանարար սահմանները¹⁵: Այլոքեն՝ արքունիքն ընկերային մի միջավայր է, որտեղ միմյանց հանդիպում են հակոտնյա միտումներ. հրամանն ու կատարումը, տիրապետումն ու ենթարկումը, կառավարումն ու կառավարվումը¹⁶: Ի հետևանս դրանց հավասարակշռության՝ արքունիքն ի կատար է ածում իր հիմնարար համակեցական գործառույթները. կազմակերպում, կառավարում, վերահսկում և կարգաբերում է հանուր կարևորության բոլոր աշխատանքներն ու հարաբերությունները:

Արդեն քանիցս մատնանշել ենք, որ այդ աշխատանքներն ու հարաբերու-

10 Տե՛ս J. v.Kruedener, op.cit., S.42; D.Schlinkert, Vom Haus zum Hof. Aspekte höfischer Herrschaft in der Spätantike. Klio, 78(1996), S.459.

11 Տե՛ս M. Weber, Economy and Society, pp. 231-235.

12 Տե՛ս M. Weber, Economy and Society, pp. 239-241.

13 Տե՛ս J. J. Spielvogel, Western Civilization, Belmont, 2006, pp.7-8.

14 Տե՛ս J. Duindam, op. cit., p.52.

15 Տե՛ս N. Elias, The Society of Individuals, New York/London, 1991, p.157.

16 Տե՛ս M. Weber, Economy and Society, pp. 941-956.

թյունները պարառում են համակեցական կյանքի երեք հիմնական տիրույթներ՝ արտադրություն, պաշտպանություն և ինքնակառավարում¹⁷: Հետազոտությունները ցույց են տալիս, որ նույն սկզբունքով գործառում է նաև արքունիքը, որն ունի համակերպ (isomorphic) կառուցվածք: Տարաստիճան ծառայամին հոգում է նրա նյութական, թիկնագոր գունդը՝ պաշտպանության, իսկ արքան և խորհուրդը՝ ինքնակառավարման խնդիրները: Այդուհանդերձ, ճիշտ չէ արքունիքը համարել սոսկ այս կամ այն ընկերային համակեցության հայելին: Այն ապրում է ինքնակա կյանքով և, խոշոր հաշվով, համակեցական ամբողջի վրա ներազդում է համակարակական (sympathetic) խթանով. տեղերում ձևավորվում են նրա մանրակերտերը (կուսակալների պալատները), որոնք կրկնում ու տարածում են նրա մշակած ստանդարտները՝ ռազմական և վարչական, տնտեսական և քաղաքական, կրոնական և գեղագիտական: Եվ այդ ներազդեցությունն այնքան էական է, որ հետազոտողներից ոմանք հակված են մտածելու, թե վաղ հասարակություններում հենց արքունիքներն են ձևավորել մեզ հայտնի էթնաքաղաքական միավորները՝ եգիպտացիներ, բաբելացիներ, պարսիկներ, հնդիկներ, չինացիներ¹⁸: Ընդամին, կերպափոխությունը կատարվում է արքունիքի մշակած ու հետևողականորեն կիրարկվող կրոնական, վարչական, մշակութային հրամայականների համակարգով:

Այս առումով կրկին անդրադառնալով արքունիքի հիմնարար խնդիրներին՝ հետազոտողները վերջինիս միջակա հասարակական դիրքը բնութագրում են երկու հակոտնյա գործառույթով՝ ներգրավվածություն և օտարում¹⁹: Այո, ինչպես միապետի, այնպես էլ համակեցական ամբողջի նկատմամբ արքունիքը հակոտնյա հարաբերությունների միջավայր է. միաժամանակ և՛ միասնական է նրանցից յուրաքանչյուրին, և՛ տարանջատ: Հենց դա էլ ապահովում է նրա հարաբերական անկախությունը:

Արքունիքը տվյալ հանրույթի ընտրախավի գործունեության միջավայր է: Աստ տիրական է հարաբերությունների մի համացանց, որն ունի իր յուրօրինակ իմաստաբանությունն ու նշանաբանությունը: Եվ ինչպես ցուցանում են արդի հետազոտությունները, դրանք շատ առումներով պայմանավորված են արքունիքի համալրման եղանակով: Շարունակ կրկնվող և տևական մի գործընթաց, որի ծիրում հստակ ուրվագծվում է երկու տարամետ ուղի: Դրանցից առաջինն ուղղակի համեմատական կապ է տեսնում ընտրախավի ներկայացուցիչների արտաբանական և ներարքունական դերակատարությունների միջև: Դերակատարություններ, որոնք պայմանավորված են նրանց ծագմամբ, հարստությամբ, ռազմական գորությամբ, հեղինակությամբ և ազդեցությամբ: Նշանի և իմաստի նման համընկնումը հետազոտողները երբեմն հատկանշում են իբրև պատկերագրություն (pictography): Վերջինիս գերակայությունն ի գորու է ստեղծել մի այնպիսի

17 Ընդլայն ընկերաբանական մոտեցմամբ՝ այս երևույթը եզրաբանվում է իբրև քաղաքակրթական կառույցի մարդակերպություն: Տե՛ս Ա.Ստեփանյան, Ընկերային հոմոեոստասիսը Արտաշիսյան Մեծ Շայքուն (Քաղաքակրթական հետհայաց), «Քաղաքագիտության հարցեր», Եր., 1(2009), էջ 30:

18 Ամստարակույս, պատկերն այս աստիճան միագիծ չէ: Արքունիքը, պետությունը և հանրույթը գործառում են ըստ որոշակի «իրավական կանոնների», որոնց սրբազնային ծագումը որևէ կասկած չի հարուցում: Քուրմ-գահակալը և նրա պաշտոնությունը սոսկ աստվածային կամքի իրագործողներ են: **M. Weber**, *Economy and Society*, pp. 225-231; cf. **R. J. Holton, B. S. Turner**, *Max Weber on Economy and Society*, New York, 1989, pp. 35-37.

19 Տե՛ս **N. Elias**, *Problems of Involvement and Detachment*, *British Journal of Sociology*, 7 (1956), pp.227-229.

իրավիճակ, երբ արքունի բոլոր կարևոր պաշտոնները հայտնվում են «փառապանծ տոհմերի» շառավիղների ձեռքում: Պատմությունը գիտի նման բազում օրինակներ:

Ինչ վերաբերում է երկրորդ սկզբունքին, ապա դա, ընդհակառակը, կառուցված է ընտրախավի անդամների արտարքունական և ներարքունական դերակատարությունների հակադարձ համեմատականության վրա: Այլ խոսքով՝ նշանի և իմաստի շեղումի վրա: Ի հետևանս դրա՝ արքունի կարևորագույն պաշտոնները կարող են հայտնվել այնպիսի անձանց ձեռքում, որոնց ծագումն ավելի համեստ է: Նրանց պաշտոնական առաջընթացը չի գարգանում «ինքնաշխատ ռեժիմով», այլ արդյունք է գործարար որակների, գիտելիքների, փորձառության և կամքի: Այլ խոսքով՝ նշանի և իմաստի միջև ենթադրվում են բանական բացատրելի հարաբերություններ: Ուստի դրանք երբեմն բանաձևվում են իբրև գաղափարագրություն (ideography)²⁰: Բնականոն ընթացքով գործառող արքունի միջավայրերում պատկերագրական և գաղափարագրական սկզբունքները հավասարակշռվում են: Կազմում են երկու զուգահեռ աստիճանակարգ՝ տարբեր մակարդակի գործակալներ, գորականներ, վերակացուներ, դպիրներ, նվիրակներ:

Հակոտնյա աստիճանակարգերը ներկայացնող տոհմիկ և ծառայողական ավագանու միջև ընթանում է թաքուն կամ բացահայտ մրցակցություն՝ թագերի, պատիվների, պաշտոնների համար: Նրանց տեղերը շրջափոխվում են. «փառապանծները» երբեմն կորցնում են իրենց արքունի դիրքն ու ազդեցությունը: Նրանց փոխարինելու են գալիս նորերը: Ավաճը սովորաբար ուղեկցվում է սադրանքներով, խարդավանքներով, դավադրություններով: Որքան էլ տարօրինակ հնչի, դրանք նպաստում են արքունիքի ներուճակության պահպանման գործին²¹:

Այդ առումով հույժ կարևոր է գահակալի անձը: Վերն արձանագրեցինք, արքունի հասարակությունը կառուցվում է հենց նրա շուրջ: Նրանից բխող իշխանական խթանները համակենտրոն բոլորակների տեսքով տարածվում են ողջ երկրով մեկ: Առաջին շրջանն, այսպես կոչված, **ներքին արքունիքն** է: Այն պարառում է արքունիքի այն անդամներին, ովքեր արքայի հետ ամենօրյա-անմիջական շփումի իրավունք և հնարավորություն ունեն: Նախ և առաջ՝ ընտանիքի անդամները՝ մայրը, (առաջին) կինը, թագաժառանգը: Եվ ապա, այսպես կոչված, **արտաքին արքունիքն** է: Դրանում ներկայացված են երկրի վարչական կարևորագույն միավորների կառավարիչները, գործակալները, գորականները, դատավորները, քրմերը, խորհրդականները և այլք: Նրանք չունեն գահակալի հետ ամենօրյա շփումի իրավունք և հնարավորություն: Այցելում են նրան ըստ գործի բերումի և անհրաժեշտության: Սակայն դա ամենևին չի նշանակում, թե իրենց ազդեցությամբ և հեղինակությամբ զիջում են առաջիններին: Երբեմն պատահում է հակառակը: Ամեն բան կախված է կոնկրետ իրադրությունից և գործող անձանցից²²:

20 Պատկերն առավել առարկայական դարձնելու համար օգտվել ենք գրաբանության եզրույթներից: Արդի նշանաբանության (սեմիոտիկա) հայրերից Չ.Փիրսն, օրինակ, օգտագործում է հետևյալ եզրույթները՝ նշան-դասիչ (index), նշան-պատկեր (icon) և նշան-խորհրդանիշ (symbol): See Pierce on Signs. Writings on Semiotics by Ch.S.Pierce (ed. by J.Hoopers), Chapel Hill/ London, 1991, pp. 238-239. Դրանցից վերջին երկուսը մոտավորապես համապատասխանում են մեր եզրույթներին:

21 Տե՛ս N. Elias, The Court Society, p.168.

22 Տե՛ս H. H. Schmitt, Hof, in-Kleines Wörterbuch des Hellenismus (ed.H.H.Schmitt, E.Vogt), Wiesbaden, 1988, S. 253-254.

Ասվածին հավելենք, որ ներքին ու արտաքին արքունիքների սահմանները վերջին հաշվով տարտամ են: Նրանք հաճախ ի մի են գալիս արքայական հանդիսությունների, ծեսերի, խնջույքների ժամանակ: Այդ առումով առավել հատկանշելի են պետական խորհրդի նիստերը: Հարդյունս նման առնչությունների՝ ավագանու տարբեր թևերի մրցույթ-համագործակցությունը դառնում է ավելի ճկուն և արդյունական: Ասվածի առումով, կարծում ենք, հիշատակելի է հին հույների հանրահայտ բանաձևը. «Չկա բարեկամների և թշնամիների [հաստատուն] կարգ, իրական է լոկ այն, ինչ նրանք անում են: Հայդմ էլ նրանք ներկայանում են այս կամ այն դերով» [Demosten., XXIII, 56]: Արքունիքում առկա ներքին լարումը և հակասություններն ունեն իրենց սահմանային վիճակը: Պատմության փորձը վկայում է, որ ազգային և ընկերային ճգնաժամերի պահին դրանք հաճախ մղվում են հետին հարթակ: Սկսում է գերակայել միասնության ոգին: Ավելին՝ հնարավոր է անգամ արքունիքի և հանրային միջև առկա կաստայական սահմանափակությունների հաղթահարման միտում²³: Հակառակ պարագային փլուզումն ի գորու է դառնալ անշրջելի:

Վերադառնալով գահակալի և արքունիքի փոխհարաբերություններին՝ ցանկանում ենք հատկանշել հետևյալը: Ինչպես արքունի բովանդակ կյանքը, այնպես էլ այդ փոխհարաբերությունները տարաչափ են: Հետազոտողները դրանցում առանձնացնում են երկու սահմանային վիճակ: Մի դեպքում, գահակալը եռանդուն է՝ միտված կերպավորելու համակեցական միջավայրն ըստ իր ստեղծագործական ծրագրերի: Հաջողության պարագային երկրում հաստատվում ու օրինականացվում է համակեցական նոր ու արդյունական կարգ, որն իր արտահայտությունն է գտնում, նախ և առաջ, արքունի միջավայրում: Նոր կարգի կայացման ներգործուն միջոցներից են նաև գահակալի նվիրատվությունները՝ թագեր, պատիվներ, պաշտոններ, կալվածքներ: Այն ունի իր հակառակ երեսը՝ պաշտոնանկություն, անպատվություն, մահապատիժ²⁴: Սակայն անցումային վիճակները, որպես կանոն, տևական չեն: Եվ աստիճանաբար գերակայում է երկրորդ վիճակը. գահակալը (կամ էլ նրա հաջորդները), հայտնվում են արքունի «ոսկե վանդակի մեջ» և սկսում են ընկալվել իբրև «առաջինն ի մեջ հավասարաց»: Իսկ ապա՝ արքունի այս կամ այն խմբավորումն սկսում է նրան թելադրել խաղի իր կանոնները: Դրան հակադրվում են մյուս խմբավորումները: Ի հետևանս դրա՝ արքունիքում ծայր են առնում էնթրոպիայի միտումներ²⁵: Ժամանակի ընթացքում դրանք սկսում են փոխանցվել կառավարման այլ մակարդակներին:

Այսուհանդերձ, երկրում առկա է ավագանու մի ստվար զանգված, որն արքունիքին չի անդամակցում, թեպետ երկրի կառավարման գործում ունի հույժ կարևոր դերակատարություն: Տեղական ավագանին է, որի ներկայացուցիչներն արքունիք այցելում են միայն բացառիկ դեպքերում, հատուկ հրավերքով: Սակայն հենց վերջիններիս ձեռքով են կազմակերպվում համապետական հարկահանությունը, գորահավաքը, հասարակական կարևորության աշխատանքները՝ տարաստիճան գործավարներ, վերահսկիչներ, դպիրներ, մուսետիկներ և այլք: Նրանք գործում են ըստ արքունիքից ստացվող հրովարտակների, հրամանների և հրահանգների: Առավել ձեռներեցները հանգամանքների բերումով ի գորու են

23 Տե՛ս D. Schlinkert, op.cit., S.461-462.

24 Տե՛ս J. v. Kruedener, S.52.

25 Տե՛ս J. v. Kruender, S.63; P. H. Wilson, Absolutism in Central Europe, New York, 2000, pp.41-44.

համալրել արքունիքի կազմը:

Համակեցական ամբողջի նկատմամբ իր ներգործությունն արքունիքն իրագործում է նաև կրոնամշակութային խթաններով: Այս կապակցությամբ, կարծում ենք, հարիր է մեկնարկել այն փաստից, որ արքունիքը տվյալ համակեցության մտահոգևոր և մշակութային կենտրոնն է: Կամ էլ՝ հավակնում է այդ դերին: Աստ ապրում և ստեղծագործում են բանաստեղծներ ու ճարտասաններ, քրմեր ու իմաստասերներ, գիտնականներ ու գեղագետներ: Նրանք ստեղծում են մտքի, ճաշակի, պահվածքի ստանդարտներ, որոնք քարոզչական խթաններով փոխանցվում են հանրությանը²⁶:

Այդ նպատակով նրանք հաճախ օգտագործում են ծեսերը, տոնակատարությունները, ներկայացումները: Իսկ զարգացած հասարակություններում՝ նաև գրության տեսքերը: Խորքային առումով դրանք ներկայացնում են, այսպես կոչված, արգելակման մեխանիզմները՝ կրոնական, իրավական, քաղաքական, բարոյական: Վերջիններիս գործառնությունը կարգաբերվում է համակեցական հարաբերությունների համացանցը: Հետազոտողներից ոմանք համոզված են, որ հընթացս ժամանակի դրանք (հարկավ, որոշակի չափաբաժիններով) ներայնանում են (interiorate) հասարակության և առանձին անհատների մեջ՝ դառնալով մտածողության և պահվածքի կայուն նորմեր: Հենց դա էլ նրանք համարում են քաղաքակրթական գործընթացի հիմնարար արդյունքը²⁷:

Իշխանական ուղղահայացի պատկերն ամբողջացնելու նպատակով ցանկանում ենք հավելել մի նկատառում ևս. պատմության բերումով որոշ համակեցական միջավայրերում պահպանվում է աշխարհագրի ավանդույթը: Որոշակի պարբերությամբ կամ ըստ անհրաժեշտության «արքան խորհրդակցում է ժողովրդի հետ»: Վերջինիս ձայնը (իրական կամ ձևական հանգամանքով) կարևոր է առկա վարչակարգի օրինականությունը վերահաստատելու համար²⁸:

Այս ամենով հանդերձ՝ ուրվագծվում է իշխանական ուղղահայացի մի հիմնարար սկզբունք, որն այսօր էլ հետազոտական սևեռումի խնդիր է: Այն հաճախ բանաձևվում է «ներգրավումի և օտարումի» չափորոշիչներով²⁹: Վերը մենք դրան մոտեցանք սոսկ արքունիքի առնչությամբ, արդ ընդլայնենք ընդգրկումը՝ հատկանշելով, որ նշված հակամիջ բևեռները գործառում են զուգահեռաբար և միտված են միևնույն նպատակին: Գահակալի անդրադարձով ասվածը ներկայանում է հետևյալ պատկերով. նա օտարված է իր (անմիջական և հեռավոր) շրջապատից և անհասանելի: Այդուհանդերձ, շարունակում է ապրել և գործել արքունիքում: Իր հերթին արքունիքը, մի կողմից, միասնական է արքայի հետ և օտարված հանրությանից: Սակայն մյուս կողմից, օտարված է արքայից և միասնական հանրությանի հետ: Ինչ վերաբերում է հանրությանին, ապա այն ինչպես արքայի, այնպես էլ արքունիքի հետ ճիշտ նույն հակամիջ հարաբերությունների մեջ է³⁰:

Ի մի բերենք մեր համառոտ հետազոտական ուրվագիծը և փորձենք ավելի

26 Տե՛ս H. H. Schmitt, op. cit., S.255.

27 Տե՛ս N. Elias, The Civilizing Process, p.367-369.

28 Երևույթը տարածված էր հելլենիստական միջավայրում և վաղ միջնադարյան եվրոպայում: Տե՛ս F. Adcock, Greek and Macedonian Kingship, Proceedings of British Academy, 39(1953), p.178.

29 Անտարակոյս, գործ ունենք նույն ընկերաբանական հիմնարար սկզբունքի հետ: Արդ դա գործառում է արքունիքի սահմաններում՝ ձևավորելով հարաբերությունների յուրօրինակ համացանց:

30 Տե՛ս J. Duindam, op. cit., p.67.

հատու շեշտերով ներկայացնել ստացված արդյունքները: Եվ այսպես, արքունիքն ընկերային հարաբերությունների մի ուրույն համացանց է, որը նպատակ ունի հաղթահարել համակեցական կյանքի (հնարավոր կամ իրական) էնթրոպիան և հաստատել կարգ ու կայունություն: Նպատակին հետամուտ՝ իրականացնում է հետևյալ հիմնարար գործառնությունները:

Առաջին՝ համակեցության քաղաքական կարգաբերումը: Գա նախ և առաջ արտահայտվում է որոշումներ կայացնելու գործառնությունով (decision making): Ի հաշիվ ներքին և արտաքին արքունիքների հնարավորությունների՝ մշակվում են «մտականային ալգորիթմներ», որոնք ի գորու են բարեշրջել համակեցության կյանքը:

Երկրորդ՝ կառավարումը: Վարչական, ռազմական, տնտեսական, կրոնական, մշակութային խթաններով ընդունված որոշումները հաստատութենացվում են (institutionalization) և դառնում համակեցական կյանքի իրողություն:

Երրորդ, իշխանական համալիրի խորհրդանշանայնացումը (symbolization): Տարաբնույթ ծեսերի, տոնակատարությունների, հանդիսությունների միջոցով այդ համալիրը շարունակաբար քարոզվում և օրինականացվում է: Նույն նպատակով օգտագործվում են արքունի ճոխությունը, ենթալեզուն, պահվածքի կանոնները, ճաշակը, նորաձևությունը և այլն:

Չորրորդ՝ գահակալի անձի ներկայացումը: Անտարակույս, լծորդված է նախորդ գործառնություն, սակայն ունի իր առանձնահատկությունները: Ձի շեշտադրում է գահակալի «քարիզմատիկ միայնությունը» ինչպես արքունիքից, այնպես էլ համակեցական ամբողջից³¹: Այդ նպատակով օգտագործում են տարաբնույթ տեքստեր՝ կրոնական, իմաստասիրական, արվեստական: Ընդհուպ՝ դրամների ներգրությունները և խորհրդանշանային պատկերները:

Հիշյալ գործառնությունների հայեցողությամբ տվյալ քաղաքակրթությունն ի գորու է պատասխաններ մշակել իր դեմ ծառացած ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մարտահրավերներին:

2. Արքունի հասարակությունների տիպաբանությունը

Տվյալ հարցադրման նպատակն է ներկայացնել այն արքունիքները, որոնք պատմության բերումով ի գորու էին ներագրել Արտաշիսյանների արքունի միջավայրի ձևավորման վրա: Կամ էլ իրենց փորձառությամբ կարող են ուղեցույց լինել արդի հետազոտողի համար: Հայտնախնայ և առաջ նկատի ունենք Աքեմենյան և Սելևկյան արքունիքները: Ցավոք, մեր քննության ծիրից դուրս է պարթև Արշակունիների արքունի փորձառությունը: Թեպետ, դրա կարևորությունը մեր գիտախնդրի դիտանկյունից որևէ կասկած չի հարուցում: Բանն այն է, որ Արշակունյաց արքունիքը այսօր էլ ըստ պատշաճի լուսաբանված չէ: Հետազոտողները դա պայմանավորում են փաստերի սղության³²: Եվ հաճախ այն նմանեցնում են Սասանյանների արքունիքին:

31 Տե՛ս T. Spawforth, Introduction, in-The Court Society in Ancient Monarchies, Cambridge/New York, 2007, pp.12-13.

32 Դաճելի բացառություններից է թերևս Ի.Յուբերի տարողունակ հոդվածը: Տե՛ս I. Huber, Die Position der Frauen am Hof der Arsakiden, Proceedings of the 5th Conference of the Societas Iranologica Europae (ed. by A. Panaino, A. Piras), Milano, 2006, S. 485-517.

Աքեմենյան արքունիքը

Աստի մի էին տարբեր արքունի ավանդույթներ՝ ասորեստանյան, բաբելական, ուրարտական, մարական: Այն արտահայտվում էր հին պարսկական **vtθ** եզրույթով, որի նախնական իմաստն առնչվում էր «նահապետական տուն» կամ «տոհմ» հասկացույթներին: Հայտնի է, որ դրա զարգացումները պարառում էին իմաստային նոր դաշտեր՝ «վեհ», «վես», «օրինական»³³:

Աքեմենյանների արքունիքը կայանում էր երեք մայրաքաղաքների պալատական համալիրներում՝ Պերսեպոլիս, Շոշ, Էկրաթանա: Նաև՝ արքաների շրջիկ ճամբարներում: Եվ նրանք բոլորն ունեին գրեթե միևնույն կառուցվածքը. «Ասում էին, թե արքան ապրում է [նաև] Շոշում կամ Էկրաթանայում՝ անտեսանելի շատերին, հոյակերտ դղյակում, որը շրջափակված է ոսկուց, էլեկտրոնից և փղոսկրից շողարձակող պատով: Այն գուգահեռվում է պարսպով, որն ունի բազում աշտարակներ ու դարպասներ՝ հեռու միմյանցից ստադիոններով: Դարպասների դռները պղնձից են, իսկ պատերը՝ շատ բարձր: Դրանցից անդին [արքունի] մեծամեծերն են ըստ իրենց կարգի. ոմանք արքայի թիկնապահները, ոմանք ծառաներն են: Սյուսներն արտաքո պարիսպների պահապաններն են, ովքեր կոչվում են տեսնողներ և լսողներ: Հայր՝ արքան, ում մեծարում են իբրև Տեր և Աստված, ի գորու է տեսնել և լսել ամեն բան» [Ps.-Aristot., De mundo, 398a]:

Հետազոտողները հակված են մտածելու, որ Աքեմենյան գահակալների իշխանությունը կառուցված էր սրբազնային քարիզմայի և պաշտոնեական (բյուրոկրատական) աստիճանակարգի հավասարակշռությամբ³⁴: Առաջին բաղադրիչը ներկայանում էր աստվածային փառքի ձևով (hvarəna): Այն համարվում էր Ահուրա Մազդայի ստեղծագործական կարությունը, որի առկայությամբ գահակալի իշխանությունը դառնում էր օրինական: Հետևաբար, նաև՝ աստվածային շնորհի և բարեգործության արտահայտություն³⁵: Կերպավորվում էր սրբազան թռչնի (արծիվ, շահին) տեսքով, որը սլանում էր արքայի առջևից և կանխագծում նրա ուղին երկրային և երկնային տիրույթներում [Yašt, 35-38]³⁶: Ենթադրվում է, որ ապագա գահակալը փառքի արժանանում էր՝ անցնելով դաստիարակության և նվիրագործության տարբեր շրջափուլերով:

Պաշտոնեական աստիճանակարգի համաբերման կարևորագույն միջավայրը, հարկավ, քեմենյան արքունիքն էր: Աստ նախ և առաջ աչքի էր զարնում գահակալի անհասանելությունը. իր մոտ ու հեռավոր ենթականերին նա հարաբերվում էր միջնորդված և ծիսականացված առնչություններով: Առնչություններ, որոնց մասին անտիկ սկզբնաղբյուրները, պահպանված բարձրաքանդակներն ու արձանագրությունները (Բիհիսթուն, Պերսեպոլիս, Նախշի Ռուստեն) հույժ արժեքավոր տեղեկույթ են պարունակում: Ի մի բերելով դա՝ կարելի է ուրվագծել հետևյալ պատկերը. քեմենյան արքունիքը նույնպես բաղկացած էր ներքին և արտաքին հատվածներից՝ յուրաքանչյուրն իր գործառույթով, իմաս-

33 T. Daryee, Mind, Body, and the Cosmos. Chess and Backgammon in Ancient Persia, Iranian Studies, 35 (2002), p.284.

34 Տե՛ս A. Kuhrt, The Persian Empire. A Corpus of Sources from the Achaemenid Period, New York, 2002, pp. 551-570.

35 Տե՛ս G. R. Garthwaite, The Persians, Oxford, 2005, pp.43-45.

36 Տե՛ս F. Mawet, Light in Ancient Iran, Journal of Indo-European Studies, 10(1982), p.285-286.

տաբանությամբ և նշանաբանությամբ³⁷: Ընդհանուր առմամբ դրանք քիչ էին տարբերվում այն ամենից, ինչի մասին խոսք եղավ վերը: Խնդիրը ենթատեքստերի և նրբերանգների մասին է միայն:

Ներքին արքունիքը: Շրջակա միջավայրից Աքեմենյան գահակալների օտարումը, համաձայն անտիկ պատմական ավանդույթի, ուներ մարական ծագում [Herod., I, 130]: Ներմուծվել էր պարսկական միջավայր Կյուրոս I-ի նախածնունդով, «[...]որպեսզի ներկայանա հանրույթին հնարավորինս հազվադեպ, բայց այնպես, որ դա առաջ չբերի նախանձ» [Herod., I,99; Xen., Cyr., VII,5,37]:

Աքեմենյան արքունիքը նույնպես ծավալվում էր գահակալի անձի շուրջ: Նախ և առաջ, դա նրա ընտանիքն էր: Բարձրաբանականներում արքայի կողքին հաճախ պատկերվում են տիկնանց տիկինը (bambiš bambšān) և գահաժառանգը: Նույն շրջանակի կարևոր դեմքերից էր արքայամայրը: Շատ հետազոտողներ համոզված են, որ ներքին արքունիքում առկա էր կանանց հարկաբաժին (կամ էլ առանձին արքունիք), որն աներկբա ազդեցություն է ունեցել պետական գործերի վրա³⁸:

Այնուհետև գալիս էին այն ծառաները (bandaka), որոնք կոչված էին սպասարկել նրա ամենօրյա կարիքները՝ հանդերձապահ, սեղանապետ, մատուցակ, բժիշկ, օժանդակ սպասարկող, ամպիոլանի բռնող, ձիասարքի կառավար և այլք: Բառի բուն իմաստով դրանք արքունի պաշտոններ չէին համարվում, ուստի ի թիվս դրանց վարողների՝ քիչ չէին նաև օտարները [Herod., III, 98, 178, 181]³⁹: Պաշտոնյա էին համարվում՝ արքայի նիզակակիրը, սակրակիրը, աղեղնակիրը: Նաև՝ թիկնագործի հրամանատարը, արքունիքի կառավարիչը, գանձապետը, դպրապետը, քրմապետը, խորհրդականները, դատավորները: Նաև՝ «արքայի աչքը և ականջը»: Նաև՝ «բյուր անմահների» ընտիր զորագունդը՝ արքունիքի պահակագործը, որն ամենուրեք ուղեկցում էր արքային⁴⁰:

Արտաքին արքունիքը: Իրագործում էր արքայի կապը տերության տարբեր ծագերի հետ՝ երկրներ, աշխարհներ, սատրապություններ: Իր կազմով տարաստիճան էր: Առաջին հարթակին արքայատոհմի անդամներն էին՝ որդիներ, թոռներ, եղբայրներ, հորեղբոր որդիներ, ովքեր ի կառավարումն ստանում էին տերության կարևորագույն վարչական միավորները՝ Եգիպտոսը, Բաբելոնիան, Մարաստանը, Հյուրկանիան, Արմենիան, Փռուզիան: Երկրորդ հարթակին պարսից ավագանու ամենափառապանծ տոհմերի շառավիղներն էին⁴¹: Առաջին հերթին այն վեց տոհմերի, որոնք սատարել էին Դարեհ I-ին գրավելու իշխանությունը և կարգաբերելու տերությունը (Ք.ա. 521-520 թթ.): Նրանք իրավունք ունեին ցանկացած ժամանակ այցելել արքային: Անտիկ պատմական ավանդույթը նրանց անվանում է արքայի **ազգականներ և բարեկամներ** (συγγενεις και φίλοι) [Herod., I,129; Xen., Anab., II,48, III, 4,31]⁴²:

Արքայի հետ նրանք հաճախ արյունակցական կապերի մեջ էին: Եվ դրանք

37 Տե՛ս **A. Kuhrt**, op.cit., p.614.

38 Տե՛ս **A. Kuhrt**, op.cit., p.587; **M. Brosius**, Court and Court Ceremonies in Achaemenid Persia, in- The Court and Court Societies in Ancient Monarchies, pp.17-57.

39 Տե՛ս **P. Briant**, From Cyrus to Alexander. A History of Persian Empire, New York, 2002, pp.324-330.

40 Տե՛ս **A. Kuhrt**, op.cit., p.623-626; **J. Wieshöfer**, Die "Freunde" und Wohlteter des Grosskönings, Studia Iranica, 9(1980),S.17-21.

41 Տե՛ս **M. Cook**, The Rise of the Achaemenids and Establishment of their Empire, in- The Cambridge History of Iran, v.2, pp.225-227.

42 Տե՛ս **M. Brosius**, Court and Court Ceremonies, p.35-37.

անընդհատ վերահաստատվում էին ամուսնական հարաբերություններով. արքան ամուսնանում էր նշանավոր տոհմերի օրիորդների հետ և, ընդհակառակը, իր դուստրերին կնության տալիս նրանց զավակներին: Այդուհանդերձ, անժխտելի է նաև այն փաստը, որ հիշյալ եզրույթներն ունեին նաև վարչական բովանդակություն. տրվում էին առանձին անձանց՝ հատկանշելով նրանց անդամակցությունն իշխանական ամենամեծ շրջանակին⁴³: Պատահական չէ, որ հենց այս միջավայրից էր արքան ընտրում վարչական և ռազմական ամենաբարձր պաշտոնյաներին: Նույն իրավունքով արտաքին արքունիքին անդամակցում էին նաև տեղական ավագանու այն ներկայացուցիչները (արքաներ, ցեղապետեր, կրոնապետեր), որոնք առանձնանում էին իրենց գործությամբ և ազդեցությամբ⁴⁴:

Ասվածին հավելենք, որ տեղերում պաշտոնավարող արտաքին արքունիքի անդամներն ունեին իրենց արքունիքի կենտրոնները՝ Բաբելոն, Մեմփիս, Էփեսոս: Դրանք կենտրոնական արքունիքի տեղական մանրակերտներն էին՝ իրենց կառույցով, գործառույթով և պաշտոնեությամբ: Պերսեպոլիսից եկող իշխանական խթանները նրանք հասցնում էին մինչև տերության հեռավոր ծագերը: Ապահովվում էին նաև հակադարձ կապը՝ տեղերից մինչև Պերսեպոլիս⁴⁵:

Վերադառնալով Աքեմենյանների արքունիքին, ցանկանում ենք հատկանշել հետևյալ իրողությունը: Այն կարիք ուներ իր համացանցի անընդհատ վերահաստատման և օրինականացման: Այդ առումով կարևորագույն միջավայրն, անտարակույս, արքայական խորհուրդն էր, որտեղ արքունի յուրաքանչյուր անդամ զբաղեցնում էր իրեն պատշաճող գահը (բարձ)⁴⁶: Նույն նպատակին էին ծառայում պարբերաբար կազմակերպվող սրբազան ծեսերը, արարողությունները և տոնակատարությունները⁴⁷: Նաև՝ արքայական խնջույքները, որոնց դիպուկ նկարագրությունը վկայում է. «Արքայական խնջույքին հրավիրյալներից ոմանք ճաշում են դրսում՝ բոլորի աչքի առաջ, ոմանք՝ ներսում, արքայի հարևանությամբ: Սակայն՝ ոչ նրա ներկայությամբ: Կա երկու հանդիպակաց սրահ, մեկում ճաշում է արքան, մյուսում [մտերիմ] հրավիրյալները: Ընդամին, արքան դռան վարագույրից կարող է տեսնել նրանց, իսկ նրանք իրեն՝ ոչ: Երբեմն, հանուր տոնակատարությունների ժամին բոլորը ճաշում են միասին, մեծ սրահում, արքայի հետ: Երբ արքան ինքն է դեկավարում սեղանը (իսկ դա բավական հաճախ է լինում), ունենում է տասնյակի չափ զավաթակից: Ծաշի ավարտին, ներքիններից մեկի հրավերով, նրանք մոտենում և ըմպում են արքայի հետ՝ թեպետ նրանց գինիները նույնը չեն: Նստում են հատակին, իսկ արքան՝ ոսկեխուռ գահավորակին: Դրանից հետո հեռանում են» [Heraclit., FGrH, F2; apud Athen., IV,145]:

Այդ բոլոր տոնակատարություններն ընկալվում էին իբրև Աստծո, արքայի և ընտրախապի միջև «նվերների փոխանակման» միջավայր. Ահուրա Մազդան արքային՝ քարիզմատիկ բարեհաճություն և իշխանության օրինականություն, արքան ընտրախապին՝ պաշտոններ, կալվածքներ և ազդեցություն, ընտրախապն արքային՝ ծառայություն, հնազանդություն, հավատարմություն: Արքան և ընտրախապն Ահուրա Մազդային (և մնացած աստվածներին)՝ պաշտամունք, հավատարմություն և զոհաբերություններ: Հարաբերությունների այս ալգորիթ-

43 Տե՛ս M. Cook, op. cit., p.227-231.

44 Տե՛ս J. Wieshöfer, Ancient Persia, London, 2006, pp. 56-66.

45 Տե՛ս M. A. Dandamaev, A Political History of Achaemenid Empire, Leiden, 1989, pp.170-172.

46 Տե՛ս G. R. Garthwaite, op. cit., pp. 49-50.

47 Տե՛ս P. Briant, op. cit., pp.195-199.

մերը պատկերագրված են արեմենյան դարաշրջանի բազում բարձրաքանդակներում⁴⁸:

Ամփոփենք: Արեմենյան տերությունը (Pax Persica) համաբերված էր ըստ յուրօրինակ էթնիկ-իշխանական կառույցի, որն ուներ երկու հակադիր բևեռ: Մեկը ներկայացնում էր գերակա էթնոսը (պարսիկներ), մյուսը՝ ենթակա էթնոսները՝ մարեր, բաբելացիներ, հույներ, հայեր, արաբներ, փյունիկացիներ և այլք: Արքունիքի խնդիրն էր՝ քաղաքական ու վարչական, հարկային ու տնտեսական, կրոնական ու մշակութային խթաններով համահարթել (հակասությանը սահմանակցող) տարասեռությունները: Ուստի նրա գործառույթում կարևորվում էին հստակ կազմակերպված աստիճանակարգն ու իշխանական հաստատությունները: Համոզում կար, որ այդ ճանապարհով կարելի է հաղթահարել ընկերային էնթրոպիայի ցանկացած դրսևորում:

Հընթացս ժամանակի այդ համոզումը կյանքի կոչեց կրոնափմաստասիրական մի համալիր՝ շաղախված արքունիքի և տիեզերքի համակերպության գաղափարով: Այն պահպանվել է Փիլոն Աղեքսանդրացու գրություն: Մենք դրան արդեն անդրադարձել ենք Տիգրան II-ի տերության գաղափարական հիմնավորման առնչությամբ: Կարծում ենք, արդ պատեհ է վերհիշել: Խոսելով երկնային կատարյալ էակների մասին՝ իմաստասերը հատկանշում է. «Դրանք ամենակար Աստծո տեղապահներն են՝ հանգույն [երկրային] մեծ արքայի ականջներին ու աչքերին, ովքեր լսում և տեսնում են ամեն բան» [Philo, De somnis, 140, cf. De agr.,51; Decal.,61]:

Մելևկյան արքունիքը

Մելևկյան տերությունը (Pax Graeca) համաբերված էր ըստ մեկ այլ էթնիկ-իշխանական կառույցի (Ջ.ա.306-83 թթ.): Նույնպես ուներ երկու հակադիր բևեռ, սակայն ուրիշ բովանդակությամբ: Գերակա էթնոսը մակեդոնացիներն ու հույներն էին, որոնք «եկվորներ» էին: Ենթակա էթնոսները «տեղաբնիկներ» էին՝ ասորիներ, փյունիկացիներ, հրեաներ, մարեր, պարսիկներ, հնդիկներ և այլք: Իրավիճակը ձևավորվել էր ի հետևանս Աղեքսանդր Մակեդոնացու նվաճումների (Ջ.ա. 334-325 թթ.): Թույլ էին տարաբնույթ էթնիկ, մշակութային, կրոնական, քաղաքական և այլ կարգի հակասությունները հաղթահարելու իշխանական կամքը և խթանը: Արդի եզրաբանությամբ՝ Մելևկյանների տերությունը ռազմաքաղաքական իրադրություն էր՝ կազմաբերված գահակալի անձնական (և ի տեղի) իշխանությամբ: Այլ խոսքով՝ շեշտադրվում էր իշխանության ոչ թե հաստատութենական կողմը, այլ քարիզման և ռազմական հրամայականը⁴⁹: Դա էլ իր կմիքն էր թողել արքունիքի կառույցի և գործառույթի վրա:

Հելլենիստական արքունի միջավայրն սկսել էր ձևավորվել **Աղեքսանդրի վրանում**⁵⁰: Այն առանձնանում էր իր գործառնական մի շարք դրսևորումներով: Եվ ենթադրելի է, որ հենց դրանք նկատի ունենալով՝ անտիկ հեղինակները Չորավարի

48 Տե՛ս **P. Briant**, op.cit., pp.208-213.

49 Տե՛ս **F. Schachereyr**, Alexander der Grosse.Das Problem seiner Personlichkeit und seines Wirkens, Wien, 1973, S.499-501.

50 Տե՛ս **T. Spawforth**, The Court of Alexander the Great between Europe and Asia, in- The Court and Court Societies in Ancient Monarchies, p.184.

արքունիքը ներկայացնում են տարբեր եզրույթներով՝ **արքայանիստ** (τὰ βασιλεια), **պալատ** (ή αὐλή), **արքունի հասարակություն** (τὰ θεραπεία) և այլն: Սակայն առաջին գիտակցությունը հաճախ անտեսում էր այդ տարբերությունները և բավարարվում սուկ այն իրողությամբ, որ աստ արքան իրագործում էր իր կարևորագույն գործառույթները՝ վարչական (τὰ χρηματικά), ռազմական (τὰ πολεμικά) և դատական (τὰ δικάστικά) [Athen., XII, 538a]: Գործառույթներ, որոնցից սկսեցին աստիճանաբար արտաձվել հելլենիստական արքունի կառույցները⁵¹:

Տվյալ առնչությամբ ցանկանում ենք ընդգծել նաև հետևյալ իրողությունը. հելլենիստական միջավայրում նույնպես արքայի և արքունիքի միջև առկա էր մի բավական ազդեցիկ իշխանական շրջանակ՝ նրա **ազգականները** (συγγενείς), **բարեկամները** (φίλοι) և **ընկերները** (ἑταῖροι καὶ δικοῦξένοι): Սակայն Ադեքսանդրի օրոք նրանց հարաբերությունների կարգաբերումը չհանգեց իր տրամաբանական ավարտին: Հստակ երանգներով դրա մասին կարելի է խոսել լոկ նրա հետևորդների (դիադոխներ) դարաշրջանից ի վեր⁵²:

Վերադառնանք Սելևկյաններին և ընդգծենք, որ նրանց արքունիքը կայանում էր երկու մայրաքաղաքներում՝ Սելևկիայում և Անտիոքում: Նաև՝ ռազմի և այլ նշանակության ճամբարներում: Կառույցի և գործառույթի առումով՝ այդ արքունիքը մակերոնական և արեմենյան ավանդույթների համադրույթն էր: Եվ պատահական չէ, որ անտիկ հեղինակներն առաջին հերթին հատկանշում են դրա տարանջատվածությունը շրջակա միջավայրից՝ պատերով, աշտարակներով և դարպասներով [Polyb., V, 26,13; Jos .Flav., Ant. Jud., XIV, 59]: Այսինքն՝ արքայի անձն այստեղ ևս հասանելի էր միայն բացառիկ ընտրյալների:

Հետագոտողները առանձնացնում են սելևկյան արքունիքի հետևյալ երեք հարթակ: **Առաջին**՝ արքան և իր տունը (ὁ οἶκος τοῦ βασιλέως): **Երկրորդ**՝ արքան և իր անմիջական շրջապատը (οἱ περὶ τὴν αὐλήν): Դրանց երկուսին էլ ներհատուկ էին իշխանական քարիզման և մտահոգևոր ներգործությունը շրջակա միջավայրի վրա: **Երրորդ**՝ արքան և իր բարձրագույն պաշտոնությունը (οἱ χειρίζοντες): Այն իշխանական-կամային ներգործություն էր իրացնում համակեցական ամբողջի նկատմամբ: Երեք հարթակների միջև սահմանները հույժ պայմանական էին և դյուրավ շրջելի: Սիսաին դրանք կազմում էին Սելևկյանների ներքին և արտաքին արքունիքները⁵³:

Սելևկյան արքունիքը նույնպես կառուցված էր գահակալի անձի շուրջ: Նա իր տերության միակ սեփականատերն էր՝ այսպես կոչված՝ **նիզակի իրավունքով** (χώρα δορικτήτος) [Polyb., IX,36,9; Diodor.,XIX,57,1-2]⁵⁴: Մնացած բոլոր տնտեսավարողները, վերջին հաշվով, սուկ վարձակալներ էին: Եվ դրա դիմաց պարտավոր էին հարկեր վճարել և ծառայություններ մատուցել⁵⁵: Հրնթացս ժամանակի այս մեկնարկային վիճակն էապես կերպափոխվեց. ի հայտ եկան սեփականության տարբեր ձևեր: Այդուհանդերձ, խնդրի իրավական կողմը մնաց գրեթե անփոփոխ: Այդ հիմամբ արքան շարունակում էր ընկալվել իբրև սելևկյան

51 St'u B. Funk, Beobachtungen zum Begriff des Herrscherpalastes und seiner machtpolitischen Funktion im Hellenistischen Raum, in- Basileis. Die Palste der hellenistischen Könige, Mainz,1996, S.46-47.

52 St'u A. B. Ранович, Эллинизм и его историческая роль, Москва-Ленинград, 1950, с.97.

53 St'u R. Strootman, The Hellenistic Royal Court. Court Culture, Ceremonial and Ideology in Greece, Egypt and the Near East, 336-30 BCE, Utrecht, 2007, pp.119-124.

54 St'u C. Eldson, Macedonicum Imperium.The Seleucid Empire and the Literary Evidence, Classical Philology, 53(1953), p.156.

55 St'u E. Goodenough, The Political Philosophy of Hellenistic Kingship, Yale Classical Studies, 1(1928), pp.61-63.

ընկերային միջավայրի հիմնական միավորիչ գործոնը: Համոզում կար, որ հենց նրա բարեգործությամբ (εὐεργεσία) վերջինս ստանում է միասնական կենսառիթմ: Այսինքն՝ հաղթահարում է (հնարավոր կամ իրական) ընկերային քառսը: Հուսկ՝ սելևկյան արքայի ամենահարգի պատվանուններից մեկը՝ **փրկիչ** (σωτήρ): Գարաշրջանի մտահոգևոր ըմբռնումների ծիրում այն լծորդվում էր աստվածային արարչության հետ և արդյունավորվում մի նոր պատվանվամբ՝ **հայտնյալ [Աստված]** (ἐπιφανής)⁵⁶: Նման զարգացումներն ի վերջո հանգեցին այն բանին, որ գահակալը պարզապես հռչակվեց **Աստված** (θεός)՝ արժանի ամենօրյա պաշտամունքի: Հավելենք, որ այս համասեռ եզրույթները կազմեցին այն մտահոգևոր առանցքը, որի շուրջ սկսեց կազմավորվել ու ծավալվել սելևկյան արքունիքի պաշտոնական քարոզչությունը⁵⁷:

Սելևկյան գահակալի փրկագործության առաջին միջավայրը, հարկավ, արքունիքն էր: Ինչպես նշեցինք, դրա միջուկը արքայական ընտանիքն էր (γένος τοὺς βασιλέως): Մերձ արքային աստ կարևոր դերակատարություն ունեին նախ և առաջ գահաժառանգը և տիկնանց տիկինը: Ի համեմատություն Աքեմենյանների, նրանց հարաբերություններն ավելի անհատական ու անմիջական էին⁵⁸: Հետազոտողներից ոմանք հակված են անգամ մտածելու, թե նրանք (հարկավ, մասնակցության տարբեր աստիճանով) ներկայացնում էին միասնական արքայական իշխանությունը: Ընդամին, թագաժառանգը, որպես կանոն, դառնում էր արքայի կառավարչակիցը: Նպատակն էր մեղմել իշխանավոխությանն ուղեկցող կրքերը և հանրության հետո պահել ներքին հակամարտությունների և քառսի հեռանկարից⁵⁹: Ինչ վերաբերում է տիկնանց տիկնոջը, ապա նա ուներ սեփական հարկաբաժինը և ծառայանին: Գրանք սկզբնաղբյուրներում հաճախ անվանվում են **արքունիք թագուհոյն** (βασίλεια τῆς βασίλισσης): Հայր՝ հաշվի է առնվում նրա դերակատարությունը պետական կարևորության որոշումներ ընդունելու և իրագործելու գործում:

Այնուհետև գալիս էր **ներքին արքունիքի** աստիճանակարգը՝ բաղկացած գահակալի մտերիմներից: Նրանք կազմում էին սելևկյան ընտրախալի ամենաբարձր մակարդակը: Չնայած իրենց դասային միասնությանը՝ միասեռ չէին: Սկզբնաղբյուրները բավական հստակ հատկանշում են նրանց տարբերությունները՝ **մեծամեծեր** (πρῶτοι), **գերապատիվներ** (προτιμώμενοι) **պատվելիներ** (τιμώμενοι), **ազգականներ** (συγγενεῖς), **ընդկերներ** (συντρόφοι) և այլք [Polyb., V, 41, 3; Plut., Mor., 197a; Jos. Flav., Ant. Jud., XV, 28, XVII, 93]: Գժվար է որոշարկել այս եզրույթների ճշգրիտ և իրավական բովանդակությունը: Այդպիսին թերևս չի էլ եղել: Ամեն բան կախված էր ի տեղի հարաբերություններից և արքայի կամքից⁶⁰: Այդուհանդերձ, հստակ է մի հանգամանք. իր շրջապատն ընտրելիս սելևկյան գահակալը նախապատվում էր մարդկանց գործարար հատկանիշերը՝ սենեկա-

56 Տե՛ս S. M. Sherwin-White, A. Kuhrt, From Samarkand to Sardis. A New Approach to Seleucid Empire, Berkeley/Los Angeles, 1993, pp.19-21.

57 Տե՛ս E. Goodenough, op.cit., p.88. Պատկերացումների այս համալիրն իր հետագա զարգացումն ստացավ կայերական դարաշրջանի շոնում: Տե՛ս H. M. Hine, Rome, the Cosmos, and the Emperor in Seneca's "Natural Questions", Journal of Roman Studies, 96(2006), pp.67-68.

58 Տե՛ս G. Herman, The Court Society of Hellenistic Age, in- Hellenistic Constructs. Essays in Culture, History and Historiography, Berkeley/London, 1977, p.204.

59 Տե՛ս R. Strootman, op.cit., pp. 111-118; E. D. Carney, Women and and Basileia. Legitimacy and Female Political Action in Macedonia, Classical Journal, 90 (1994) (367-394 pp.) 371-374.

60 Տե՛ս Զ. Бикерман, Государство Селевкидов, Москва, 1985, с.46-48.

պետ, սեղանապետ, զինակիր, որսապետ և այլն: Պատկերն ամբողջացնելու համար հարկ է հիշատակել նաև **արքայական մանկանց** (βασιλικοὶ παιῖδες): Ամենահայտնի ընտանիքների շառավիղներ, ովքեր դաստիարակվում էին արքունիքում և պատրաստվում պետական բարձր ծառայության⁶¹: Իսկ մինչ այդ կազմում էին գահակալի հեծյալ թիկնազորը:

Նույն սկզբունքով էլ ընտրվում էին ռազմական և վարչական կարևորագույն պաշտոնյաները: Նրանք կազմում էին **արտաքին արքունիքը**: Սկզբնաղբյուրներն աստ առաջինը հիշատակում են արքունիքի և ողջ տերության **վարչապետին** (διοικετής): Նրան նույնացնում էին ուշ աքեմենյան դարաշրջանի հազարապետին (χιλιάρχος), ով իշխանությամբ զիջում էր միայն գահակալին: Ապա գալիս էին **դիվանապետը** (γραμματεὺς), **գանձապետը** (ταμίης), **հետևակի հրամանատարը** (ἐπὶ τῶν πελταστῶν): Նաև՝ տերության կարևոր վարչական միավորների կառավարիչները՝ **սատրապները** և **ստրատեգոսները**: Նաև՝ տարաստիճան **գործակալները**: Միասին նրանք կազմավորում էին **արքունի խորհուրդը** (συνέδριον), որտեղ ընդունվում էին պետական կարևորության բոլոր որոշումները: Նաև՝ արքունի դատարանը (βασιλικὸν δικαστήριον) [Polyb., V, 4, 13, IV, 87, 7-8; Athen., 155b; Jos. Flav., Ant. Jud., XVI, 288; Plut., Mor., 197a]⁶²:

Հավելենք, որ ներքին ու արտաքին արքունիքների աստիճանակարգն անընդհատ վերահաստատման և օրինականացման կարիք ուներ: Դա կատարվում էր նախ և առաջ արքայական նվիրատվությունների միջոցով՝ կալվածքներ, պաշտոններ, թանկարժեք իրեր: Կամ էլ՝ պարգապես բարի վերաբերմունք: Պաշտոնական քարոզչությունը շեշտում էր, թե արքան և ընտրախավն իրենց հարաբերությունները կառուցում են ըստ բարի կամքի ու մտքի (εὐνοία)⁶³: Հարկավ, պատկերն այս աստիճան իդեալական չէր, զի անպակաս էին քսությունները, խարդավանքներն ու դավադրությունները:

Արքունիքի (և ընդհանրապես հանրային) միասնությունն ապահովելու նպատակով Մելեկյանները նույնպես կազմակերպում էին բազմապիսի ծեսեր ու տոնակատարություններ: Դրանք կառուցվում էին ըստ որոշակի նշանային համակարգի և նպատակ ունեին նախ և առաջ շեշտելու արքայական շրջապատի առանձնահատուկ կարգավիճակը: Նույն նպատակով օգտագործվում էր նաև «հագուստային կոդը»: Հայտնի է, որ սելեկյան գահակալների **բարեկամները** կրում էին առանձնահատուկ պատմուճան (χλαμύς), եզրավոր գլխարկ (κανοσία) և կոշիկ (κρηπίδες): Բոլորն էլ ծիրանագույն էին կամ ծիրանագույն երիզով⁶⁴:

Արքունիքի առանձնահատուկ կարգավիճակն ապահովվում էր նաև շքեղությամբ՝ ոսկի, կերպաս, թանկարժեք քարեր, անուշահոտ յուղեր, զինիներ, համադամ կերակուրներ: Նաև՝ թատերական ներկայացումներ, ճարտասանական մրցույթներ, իմաստասիրական գրույցներ: Դրանցում մշակվում էին մտքի ու պահվածքի կանոններ, որոնք տարաստիճան ընթացքով տարածվում էին համակեցական կյանքի այլ հարթակներ:

Մելեկյան իշխանական համալիրի պատկերն ամբողջացնելու նպատակով, կարծում ենք, հարիր է մեկ-երկու խոսքով անդրադառնալ դրա տեղական

61 Տե՛ս G. Herman, The Friends of the Early Hellenistic Rulers. Servants or Officials?, Talanta, 12(1980/1981), pp.128-131.

62 Տե՛ս F. Chamoux, Hellenistic Civilization, Oxford/Malden, 2002, pp. 234-241.

63 Տե՛ս Ch. Habicht, The Hellenistic Monarchies, Ann Harbor, 2006, pp.37-39.

64 Տե՛ս R. Strootman, op.cit., pp.160-166.

կառույցներին: Ձի արքունիքն ի գորու էր միայն այդ ճանապարհով տարածել իր իշխանական խթանները: Կրկենք մեկ անգամ էլ Սելևկյան տերությունը բաղկացած էր ինքնավար համայնքներից, քաղաքներից, ցեղապետություններից, աշխարհներից: Դրանց բոլորին միավորում էր այն **ոգեղեն օրենքը** (*νόμος ἔμφυτος*), որը մարմնավորում էր գահակալը⁶⁵: Դրանով էր առաջնորդվում տեղական պաշտոնեությունը՝ համադրելով իրենց միջավայրերում դարեր շարունակ գործառույթ իրավական սովորույթներին ու բարքերին:

Այս ամենով հանդերձ, Սելևկյան տերությունը շարունակում էր պահպանել ռազմաքաղաքական իրադրության շատ գծեր: Դրանցից ամենակարևորը ենթադրում էր գահակալի անմիջական կապը բանակի հետ: Բանակ, որի կորիզը շարունակում էին կազմել մակեդոնացիները և հույները: Այդ կապի ամենացայտուն արտահայտությունը Աշխարհաժողովն էր, որը պարբերաբար հրավիրվում էր մայրաքաղաք Անտիոքից ոչ հեռու, Դափնեի սրբազան պուրակում: Տերության կարևոր հիմնախնդիրների շուրջ արքան «խորհրդակցում էր ժողովրդի հետ»⁶⁶: Աշխարհաժողովը նրա ձեռքին հակակշիռ էր իշխանական մյուս կառույցների հնարավոր բացարձակացումը կանխելու համար: Եվ գորեղ արքան աշխարհաժողովում կարող էր անգամ հանրաձայնել. «Ես մեզանում չեմ տարածում պարսիկների կամ այլոց բարքերը: Այլ հաստատագրում եմ հետևյալ սկզբունքը. արդար է միշտ այն, ինչ սահմանել է արքան» [App., Syr., 61]: Սակայն ճգնաժամային իրավիճակներում աշխարհաժողովը կարող էր վերագտնել իր երբեմնի վճռական ձայնն ու ազդեցությունը: Այդ մասին առիթ ենք ունեցել խոսելու Սելևկյանների անկման և Տիգրան II-ի տերության կազմավորման հուլովույթին անդրադառնալիս⁶⁷:

3. Արտաշիսյան արքունիքը

Հիմնախնդրի լուսաբանությունը կապված է որոշակի դժվարությունների հետ: Նախ, հայոց արքունի միջավայրի վերաբերյալ անտիկ սկզբնաղբյուրների վկայությունները հատվածային են և պատահական: Երկրորդ, վաղ միջնադարի հայոց սկզբնաղբյուրներն Արտաշիսյաններին չեն տարբերակում Արշակունիներից. խոսում են Մեծ Հայքի գրեթե անփոփոխ արքունի ավանդույթների մասին: Ուստի նրանց տեղեկույթին հարկ է վերաբերվել զգուշությամբ: Այդուհանդերձ, կարծում ենք, մեր առաջադրած գիտախնդիրն անհեռանկար չէ: Արքունիքների իմաստաբանության, ինչպես նաև Աքեմենյանների, Սելևկյանների և հայ Արշակունիների փորձառության լույսով հնարավոր է ուրվագծել Արտաշիսյան արքունի միջավայրի ընդհանրական պատկերը: Դժմարության դեմ չմեղանչելու համար հարկ ենք համարում հատկանշել, որ նախորդ սերնդի հետազոտողներից ոմանք առնչվել են հիմնախնդրի ինչ-ինչ դիտանկյուններին⁶⁸:

65 Տե՛ս E. Goodenough, op. cit., pp. 62-64.

66 F. Chamoux, op. cit., pp. 272-274; Ch. Habicht, op. cit., pp. 30-31.

67 Տե՛ս Ա. Ստեփանյան, Քաղաքակրթական մարտահրավերը Տիգրան II-ի դարաշրջանում (պատմություն, գրույթ, մեկնություն), Տիգրան Մեծ, Տիգրան Մեծի գահակալության 2100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., 2011, էջ 158-159:

68 Նախ և առաջ նկատի ունենք Գ. Սարգսյանի և Ս. Կրկյաշարյանի հետազոտությունները: Տե՛ս Գ. Սարգսյան, Յելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Եր., 1966, էջ 5-22; Ա. Սարգսյան, Հելլենիստական կարգը հելլենիստական դարաշրջանում, ՀԺՊ, հ. 1, էջ 667-678; Դ. Սարգսյան, Свидетельство позднеавилонской клинописной хроники об Армении времен Тиграна II, Պատմագիտական հետազոտություններ, Եր., 2006, с. 191-202; Он же, Царица Эрато, անդ., с. 215-223; Ա. Կրկյաշարյան, Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI-մ.թ. IV դդ.), Եր., 2005, էջ 171-184:

ա) Արտաշիսյան արքունիքի տարածական նկարագիրը

ՊԱՏՄԱՆԹՅՈՒՆ

Գ. (Թ) փարհ, քիվ 4 (36) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2011

ՎԵՄ համահայկական հանդես

Արքունիք հասկացության այս դիտանկյունը հայերեն արտահայտվում է համասեռ եզրույթների մի շարքով՝ «տուն արքայի», «դուռն արքունի», «ոստան», «վանք թագաւորի» և այլն⁶⁹: Այն կայանում էր Մեծ Հայքի երկու մայրաքաղաքներում՝ Արտաշատում և Տիգրանակերտում: Երկուսի համար էլ կիրարկելի է հելլենիստական դարաշրջանի հանրահայտ բանաձևը՝ **արքունի դոյակ և քաղաք** (*βασιλεια και πόλις*): Ենթադրելի է, որ դրանց միջև խոյացել է բարձր պարիսպ: Եվ դարպասները հսկել է արքունի բազմամարդ պահակազորը: Այլոքն՝ նման այլ գահակալների՝ հայոց արքայի անձը հստակորեն տարանջատված էր հասարակական ամբողջից:

Արտաշատ: Արքայական դոյակը տեղադրված էր մայրաքաղաքի ինը բլուրներից մեկի վրա: Դրա հնագիտական հետազոտությունը դեռ սպասում է իր նվիրյալին: Ինչ վերաբերում է անտիկ հեղինակներին, ապա նրանց վկայությունները հույժ դիպվածային են: Գիտենք, ի մասնավորի, որ կառուցվել է ըստ Հաննիբալի հատակագծի [Strabo, XI,14,6]: Աստ Տիգրան II-ն ընդունել է Պոմպեոսի նվիրակներին և նրանց ուղեկցող թիկնազոր ջոկատը [Plut. Pomp., XXXIII, 2]: Եվ ապա՝ հանդիսությունների սրահում Արտավազդ II-ը կազմակերպել է հայոց արքայադասեր և պարթև թագաժառանգ Բակուրի հարսանյաց արարողությունը, որն ուղեկցվել է Էվրիպիդեսի «Բաքոսուհիների» բեմադրությամբ [Plut., Crass.,XXX,]: Գիտենք նաև, որ Արտաշատի դոյակի հատակագծով Երվանդ արքան կառուցել է Դ-վինի դոյակը, որի մասին Պատմահոր տեղեկույթը, կարծում ենք, արժանահավատ է. «Չմիջնաբերդն ամրացուցաներ բարձր պարսպաւք, եւ դրունս պղնձիս կանգներ ի միջոցի պարսպին, եւ ելանելիս երկաթիս ի ներքուստ ի վեր մինչեւ ցորտնն, եւ ի նմա որոգայթս իմն ծածուկս ընդ մէջ աստիճանացն, որպէս զի ըմբռնեսցի՝ եթէ որ գաղտ ելանելով դաւել կամիցի զարքայն» [Խոր.,II, 39,5]:

Տիգրանակերտ: Ապիանոսը թողել է այս մայրաքաղաքի տարածահմաստային բանաձևը, որը հույժ հարիր է հելլենիստական պատկերացումներին՝ **քաղաք և միջնաբերդ** (ή πόλις και τὸ φρούριον) [App. Mithr.,XII,84]: Եվ հավելում է, որ Լուկուլլոսի կողմից Տիգրանակերտի պաշարման ընթացքին (Ք.ա. 69 թ.) այստեղ էին գտնվում արքայի կանանոցն ու զանձերը: Այդուհանդերձ, Տիգրան արքայի կենտրոնատեղին մայրաքաղաքից դուրս էր. «Քաղաքամերձ դաստակերտում նա կառուցել էր արքայանիստ (τὰ βασιλεα)՝ հանդերձ որաստեղերով (κνηγέσια) ու լճերով (λίμνας): Իսկ ոչ հեռու՝ նաև մի հզոր ամրոց (τὸ φρούριον κατέρον)» [Ibid.]: Յավոք, այս պարագային նույնպես ստիպված ենք արձանագրել, որ ի գորու չենք մեր տեղեկույթը լրացնել ի հաշիվ հնագիտական նյութի:

Արտաշատի և Տիգրանակերտի միջև կապն իրագործվում էր Արքունի պողոտայով, որն արքայի առանձնահատուկ հոգածության առարկան էր: Մի նկատառում ևս. Տիգրան II-ի տերության ծավալման պայմաններում սելևկյան մայրաքաղաք Անտիոքը նույնպես ծառայել է իբրև հայոց արքայանիստ: Հիշենք, որ աստ հայոց արքան ընդունել է հռոմեական դիվանագիտական առաքելությունը՝ ղեկավարությամբ լեգատ Ապիոս Կլավդիոսի [Plut., Lucull., XXI,1-2]:

69 Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1, էջ 386, հ.2, էջ 522:

Անտարակույս, Անտիոքը նույնպես աշխույժ երթևեկով կապված էր մյուս արքայանիստերին:

Արքունիքի տարածական պատկերն ամբողջացնելու համար ցանկանում ենք հատկանշել, որ այն կայանում էր նաև արքայի ռազմի ճամբարներում: Դրանցից ամենահայտնին կազմակերպվում էր հրնթացս Աշխարհաժողովի, որը պարբերաբար հրավիրվում էր Ծաղկոտն գավառում, սրբազան Նպատ լեռան լանջերին: Արքայի «ինքնիշխան հրամանա» դրան մասնակցում էին հայոց համակեցության բոլոր դասերի ներկայացուցիչները: Համագունդ՝ նրանք կազմում էին «գորքն հայոց»: Իսկ արքայական վրանը հայոց համակեցության այդ ծիսական մանրակերտի կենտրոնն էր⁷⁰:

բ) Արտաշիսյան արքունի հասարակությունը

Մեր նախորդ հետազոտական ակնարկներում առիթ ենք ունեցել բազմիցս անդրադառնալու հիմնախնդրի այս դիտանկյանը: Արդ, փորձենք ի մի բերել և համակարգել ասվածը՝ չվախենալով ինչ-ինչ կրկնություններից: Ձի դրանք այժմ վերաբերում են ոչ թե պատմության այս կամ այն դրվագին, այլ հայոց ընկերային համակեցության կարևորագույն կառույցներից մեկին՝ ընտրախավին: Ի մասնավորի՝ նրա կազմին, գործառույթին, (հնարավորինս նաև) ինքնագիտակցությանը: Տվյալ կապակցությամբ ցանկանում ենք հատկանշել Արտաշիսյանների արքունիքի իմաստային և նշանային ակնառու գուգահեռներն ինչպես աբեմենյան, այնպես էլ սելևկյան արքունիքների հետ: Հարկավ, հայոց արքունիքն ուներ իր առանձնահատկությունները՝ պայմանավորված այն իրողությամբ, որ գործառում էր միաձույլ ազգային միջավայրում: Եվ միայն մի կարճ ժամանակով (Ք.ա.83-66 թթ.) նրա ընդգրկումը հասավ կայսերական ծավալների:

Վերն արդեն հատկանշել ենք, արդի պատմական ընկերաբանության տվյալներով՝ հայոց արքունի հասարակությունը ձևավորվել է «բնականոն ուղիով»: Այսինքն՝ նահապետական ընտանիքներից մեկի քաղաքական, տնտեսական, քարիզմատիկ գերակայության հիմամբ: Ասվածը հաստատվում է նաև լեզվամտածողությամբ: Հանրահայտ է, **տուն/տոհմ** եզրույթը հայոց մեջ ընդհանրական ընկերային միավորի կշռույթ ուներ՝ սկսած ընտանեկան կառույցից մինչև ժառանգական տիրույթ, վարչական միավորից մինչև ազգային ընդհանրության բարձրագույն մակարդակ՝ **տունն Հայոց**: Նույն տրամաբանությամբ էլ, ինչպես խոսվեց վերը, արքունիքը եզրաբանվում էր իբրև «տուն արքայի»: Այս իմաստով՝ արքան նախ և առաջ տանուտեր էր (*pater familias*)⁷¹: Եվ այդու՝ միանգամայն համադրելի նահապետական այլ տների հայրերին (*ἐθνάρχοι*):

Սակայն, «բնականոն ուղին» միակը չէր: Արտաշիսյան արքունիքի ձևավորման գործում զգալի էր նաև «արտաքո ստեղծագործական ճիգը»: Հիմնախնդրի այս կողմին մանրամասն անդրադարձել ենք Արտաշես I-ի բարենորոգումների հանգամանքով: Ուստի առավել հարիր ենք համարում խոսել արքունիքի

70 Տե՛ս **Ա.Ա.Степанян**, Развитие исторической мысли в древней Армении. Миф, рационализм, историописание, Ер., 1991, с.96-98.

71 Այս կապակցությամբ հույժ նկատելի է Աղաթանգեղոսի մի բանաձևը. «[...]զի որպէս ամենայն տանուտեր ընդ տան իւրոյ եւ ընդ ընտանեաց իոզայ՝ սոյնպէս եւ մեք իոզամք ընդ մեր Յայոց աշխարհիս շինութեան»[Ազար., XII,7]: Գնձո՛ւ. **Н. А. Адонц**, Армения в эпоху Юстиниана, Ер., 1970, с.392-393.

կայացման համադրական ուղու մասին: Ենթադրելի է, որ հենց տվյալ տրամաբանությամբ էլ ձևավորվել է համասեռ եզրույթների մի շարք՝ միտված շեշտադրելու արքունիքի ընկերային կազմն ու բովանդակությունը՝ «բնակիչք արքունեաց», «մերձաւորք արքայի», «պաղատականք», «մեծամեծք» այլն⁷²:

Ինչպես բնականոն, այնպես էլ բարենորոգչական ճիգի պարագային առկա է միևնույն իմաստային հաստատունը՝ արքայի անձը: Արտաշիսյան արքունիքը նույնպես համաբերված էր նրա անձի շուրջ: Ենթադրելի է, հելլենիստական ազդեցությամբ հայոց միջավայրում շրջանառում էր բավական մանրամասն մշակված «արքունագիտական» մի տեսություն, որի հիմնադրույթները պահպանվել են վաղ միջնադարյան պատմիչների գրույթում: Խոսքը վերաբերում է նախ և առաջ Մովսես Խորենացուն: Պատմելով Վաղարշակ արքայի գործերից՝ նա հավելում է. «Արդ նախ եւ առաջին օրինադրէ թագաւորն զինքն եւ զտուն իւր, սկիզբն առնելով ի գլխոյ իւրմէ եւ ի թագէ»[Խոր., II, 7, 4]: Այլոքն՝ Մեծ Հայքի իշխանական համակառույցը նկատվում էր իբրև համակենտրոն բոլորակների համաչափություն, որը սկզբնառում էր գահակալից: Եվ Արտաշիսյանների արքունիքը ծավալվում էր ըստ իր անդամների՝ արքայի հետ ունեցած մերձավորության աստիճանի: Կարծում ենք, հենց այդ իրողությունը նկատի ունեին անտիկ հեղինակները, երբ Տիգրան II-ի արքունիքի վերաբերմամբ օգտագործում էին հետևյալ բանաձևը. «որք առընթեր են Տիգրանին(οἱ μὲν ὄντες ἀμφὶ τὸν Τιγράνην)»[App., Mithr., XII, 104]: Հայոց միջավայրում շրջանառում էր այս բանաձևի ավելի տարողունակ տարակերպը՝ «արքայ եւ ընտանիք եւ մերձաւորք նորա» [Ագաթ., 104, 5]:

Հելլենիստական արժեքաբանությամբ՝ նրանք կազմում էին գահակալի **մերձավորների** աստիճանակարգը: Կրկնենք մեկ անգամ էլ. խոսքն անպայման արյունակցական կապի մասին չէ, այլ համակեցական մերձավորության աստիճանի: Ցավոք, առկա փաստական նյութը հնարավորություն չի տալիս խոսել այդ կառույցի բոլոր մանրամասների մասին: Բավարարվենք ընդհանուր պատկերով՝ հատկանշելով, որ այս պարագային նույնպես անտիկ և վաղ միջնադարի հայ հեղինակների վկայություններն ընդհանուր առմամբ համահունչ են:

Արդեն խոսել ենք, անդրադառնալով Արտաշատի դաշնագրի կնքման հանգամանքներին՝ Պլուտարքոսը ներկայացնում է Տիգրան II-ի մերձավոր շրջապատը: Այն ուղեկցում էր արքային և ընդհուպ մոտեցավ հռոմեական ճամբարի մատույցներին: Բաղկացած էր արքայի **բարեկամներից և ազգականներից** (φίλους καὶ συγγενεῖς αὐτοῦς) [Plut., Pomp., XXXIII, 2]: Համաձայն Դիոն Կասսիուսի՝ ապստամբ Տիգրան Կրտսերին սատարում էին **որոշ հայ մեծամեծներ** (τινας τῶν πρώτων) [Dio Cass., XXXVI, 51, 1]: Իսկ Անտոնիուսը ուզում էր ծուղակը գցել Արտավազդ II-ին՝ կանչելով իր ճամբար բանակցությանների պատրվակով: Եվ այդ նպատակով փորձում էր օգտագործել արքայի **ընկերներին** (πεῖθων διὰ τῶν ἐταίρων) [Dio Cass., XLIX, 39, 4]:

Հելլենիստական փորձը հուշում է, որ վերոիշյալ եզրույթները (բարեկամ, ազգական, ընկեր, մեծամեծ) աներկբա ընկերային բովանդակություն ունեին: Իսկ դա նշանակում է. չնայած իր միասնությանը՝ հայոց արքայի շրջապատը միատարր չէր: Դրանում առկա էր բավական հստակ աստիճանակարգ՝ բաղկացած ենթադասերից, որոնք միմյանցից տարբերվում էին իրենց արքունի դիրքով ու

72 Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1, էջ 386:

դերակատարությամբ: Հապացույց ցանկանում ենք մատնացուցել Պլուտարքոսի մի վկայություն: Տիգրանակերտի կառուցման և շենացման մասին խոսելիս նա վկայում է. «Լի էր բաղաբը բարիքով ու գեղեցկությամբ: Չի բազում **մասնավոր անձինք և իշխանավորներ** մրցակցում էին արքային այն ընդարձակելու և զարդարելու գործում» [Plut., Lucull., XXVI, 2]: Անտարակույս, խոսքը կրկին արքայի **մերձավորների** մասին է: Նրանց հիմնական ձեռքբերումը մերձավորությունն էր գահին: Մերձավորություն, որն ի գորու էր վերածվելու հարստության, ազդեցության, պատվի: Նաև՝ իշխանության ու պաշտոնի: Ամեն ինչ կախված էր արքայի կամքից և պահի պատեհությունից:

Այս լույսի ներքո վերոհիշյալ մասնավոր անձանց (*παντός ιδιώτου*) կարելի է նույնացնել արքայի այն մտերիմներին, ովքեր (տվյալ պահին կամ ընդհանրապես) որևէ կոնկրետ պաշտոն չէին վարում: Սակայն ունեին աներկբա կշիռ և ազդեցություն⁷³: Ինչ վերաբերում է իշխանավորներին, ապա դրանց կապակցությամբ Ապիանոսի մոտ օգտագործված է մի եզրույթ (*παντός δυνάστου*), որը բացի պաշտոնից, շեշտադրում է իր կրողի առնչությունը ավանդական տոհմական կառույցներին: Այս կապակցությամբ, կարծում ենք, հարիր է դրա իմաստային դաշտը լծորդել **նահապետք հայոց** եզրույթին [cf. Xen, Anab., III, 5, 27]⁷⁴:

Հուսկ՝ մոտենում ենք ավագանու ներդասային թերևս ամենացայտուն տարանջատմանը, որին բազմից անդրադարձել ենք մեր նախորդ հետազոտական ակնարկներում: Անտիկ սկզբնաղբյուրներում հիշտակվող **մեծամեծք հայոց, նահապետք հայոց** (*δέσποτες τῶν ἔθνῶν*) եզրույթներն Արտաշիսյան արքունիքի միջավայրում ներկայացնում էին այն անձանց, որոնց դիրքը պայմանավորված էր նախ և առաջ արտարքունական հանգամանքներով՝ ծագում, հարստություն, զինուժ: Ուստի ավելի անկախ պահվածք ունեին: Իսկ պատեհության պարագային անգամ վերածվում էին բացահայտ ընդդիմադիր ուժի: Պլուտարքոսը հավաստում է, թե նրանցից շատերը (*πολλοὺς τῶν δυναστῶν*) զաղտնի հարել էին հռոմեական նվիրակ Ապիոս Կլավդիոսին, զի «Հային[Տիգրան II] ենթարկվում էին թաքուն ատելությամբ» [Plut., Lucull., XXI, 2]: Մեկ այլ առիթով նրանք անվանվում են **լավագույններ** կամ **ավագներ** (*ἀρίστοι*), որոնց գույքի բռնագրավման սպառնալիքով արքան «հրավիրել էր» բնակվել նոր մայրաքաղաքում [App., Mithr., 84]: Հարկավ, նպատակն էր նրանց պահել «նսկե վանդակում» և կանխել դավադրությունների հնարավորությունը⁷⁵:

Այլ էր ծառայողական ավագանու պարագան: Նրա առաջընթացն ու բարեկեցությունը պայմանավորված էին ներարքունական հանգամանքներով: Արդի արքունագետներից ոմանք տվյալ դասի ներկայացուցիչներին երբեմն անվանում են «մարդիկ ոչմիտեղից»⁷⁶: Անտարակույս, սա չափազանցություն է, սակայն ոչ առանց ճշմարտության հատիկի: Մելեկյան միջավայրում, օրինակ, հայտնի էին նման արքունականներ (*οὐδαμόθεν*)⁷⁷: Սակայն նրանք չէին պարառում ողջ պաշտոնեությունը: Վերջինիս կազմը բավական բազմազան էր և պարառում

73 «Մասնավորների» առկայությունը հատկանշական էր գրեթե բոլոր հելլենիստական արքունի միջավայրերին: Տե՛ս G. Herman, The Court Society of Hellenistic Age, p. 214.

74 Տե՛ս C. Toumanoff, Studies in Christian Caucasian History, Georgetown, 1963, pp.114-116.

75 Հելլենիստական միջավայրում նման բաղաբականություն կիրառվում էր առավելաբար ազդեցիկ պետական այրերի զավակների նկատմամբ: Դա հին մակեդոնական ավանդույթ էր: Տե՛ս F. Adcock, Greek and Macedonian Kingship, Proceedings of British Academy, 39(1953), p.172.

76 J. Duindam, op.cit.,pp.50-51.

77 Տե՛ս R. Strootman, op.cit.,p.123.

էր ինչպէս «փառապանծ», այնպէս էլ «աննշան» ընտանիքների շառավիղներին: «Փառապանծների» պարագային դրանք սովորաբար ընտանիքի կրտսեր անդամներն էին (սեպուխներ), որոնց առաջընթացի հնարավորությունը հույժ սահմանափակ էր:

Մի բան անկասկած է. արքունի այս դերային պահվածքն իր կրողից պահանջում էր մասնագիտական որակներ: Կամ էլ՝ հատուկ ծառայություններ հանդէպ գահակալի: Անտիկ հեղինակներն այս դիտանկյան մասին որևէ վկայություն չունեն: Բացն ինչ-որ չափով լրացնում է Մովսէս Խորենացին: Համաձայն նրա՝ Մեծ Հայքի արքաները (Վաղարշակ, Արտաշես), ի նշանավորումն ակնառու գործարար ընդունակությունների կամ ծառայությունների, հաճախ արքունի կարևոր պաշտոնները վստահում էին «երկրորդական» դեմքերի: Եվ հաստատում նրանց տների բարձր դիրքը ինչպէս արքունիքում, այնպէս էլ երկրում՝ Գնթունիներ, Աբեղյաններ, Գաբեղյաններ, Սպանդունիներ և այլք [Խոր., II, 7, 6-16]:

Այո, ավագանու տոհմիկ և ծառայողական թւերի բաժանարար սահմանը հաճախ տարտամ ուրվագիծ ուներ: Այդուհանդերձ, դրանից նրանց ներհակությունը չէր վերանում: Չի ուներ հիմնարար բովանդակություն և իմաստ: Ընդգրկում էր համակեցական կյանքի բազում տիրույթներ՝ սկսած իշխանությունից և տնտեսությունից ընդհուպ աշխարհատեսություն: Այս հիմնախնդրին բազմիցս առիթ ենք ունեցել անդրադառնալու՝ ի տեղի քննելով Արտաշիսյանների պատմության տարբեր դիտանկյուններ: Արդ, բավարարվենք վերջինիս լոկ ընդհանրական պատկերով: **Տոհմիկ ավագանի.** ինքնաբավ տոհմական տիրույթներ, բնատնտեսություն, առասպելամտածողությամբ շաղախված աշխարհատեսություն: **Ծառայողական ավագանի.** մասնավոր տիրույթներ (դաստակերտներ և ազարակներ), տնտեսության ապրանքայնացման միտումներ, քաղաքային կյանք, հելլենիստական արժեքներով շաղախված աշխարհատեսություն: Հույժ հատկանշական էր նրանցից յուրաքանչյուրի քաղաքական տեսլականը: Տոհմիկները երազում էին պահպանել իրենց ավանդական ազատությունները՝ համեմատաբար թույլ պետական ուղղահայացի պայմաններում: Մինչդեռ ծառայողական ավագանու տեսլականը լծորդված էր գորեղ արքայական իշխանության և պետական կառույցի հետ⁷⁸:

Նրանց միջև ընթանում էր մրցակցություն, որը հաճախ վերածվում էր սուր պայքարի: Պայքար, որն արտաքին քաղաքականության ծիրում հաճախ դրսևորվում էր պարթևամետությամբ կամ հռոմամետությամբ: Դրա վարուվերումները կազմում էին Արտաշիսյան դարաշրջանի պատմության կարևորագույն բաղադրիչները:

գ) Արտաշիսյան արքունիքի գործառնական կառույցը

Ինչպէս այլուր, հայոց արքունիքը բաղկացած էր արքայի ընտանիքից, նրա անձն ու տունը սպասարկող ծառայանուց և երկիրը կառավարող պաշտոնությունից: Միասին նրանք կազմում էին ներքին և արտաքին արքունիքները:

Ներքին արքունիք: Դրա միջուկը կազմող արքայական ընտանիքին կանոնադրաճանաչ ստորև, ավելի մանրամասն: Այժմ կենտրոնանանք արքայի մերձակա

78 Տե՛ս Ա. Ա. Степанян, Развитие исторической мысли, с.92-94; Ա.Ստեփանյան, Ընկերային հոմեոստասիսը Արտաշիսյան Մեծ Հայքում (Քաղաքակրթական հետհայաց), էջ 31-32:

սպասավորների վրա՝ հատկանշելով, որ տվյալ կապակցությամբ նույնպես անտիկ պատմիչների տեղեկույթը հույժ սուղ է: Նրանք սովորաբար խոսում են Տիգրան II-ի արքունիքի արտակարգ ճոխության և մեծաքանակ ծառայանու մասին⁷⁹: Եվ առիթը բաց չեն թողնում շեշտելու, որ անդ տիրում էր ստորաբարշտությունն ու քծնանքը: Անտարակույս, նպատակն է հայոց արքունիքը ներկայացնել իբրև չարիքի բևեռ: Սակայն ուշադիր հայացքն այդ տեղեկությունն ի գորու է գտնել հույժ կարևոր մանրամասներ: Այսպես, համաձայն Պլուտարքոսի՝ «Տիգրանին սպասարկում էին բազում արքաներ: Գրանցից չորսը միշտ առընթեր էին իրեն՝ իբրև ուղեկցորդ կամ զինակիր (ἄσπερ ὀπαδοὺς ἢ δορυφόρους): Երբ նա ձիավարում էր, վագում էին կողքից՝ հագած կարճ պատմունճան: Իսկ երբ բազմած [գահին] պետական գործեր էր վարում, կանգնում էին կողքին՝ խաչված ձեռքերով» [Plut., Lucull., XXI, 5]: Եթե մի կողմ թողնենք չափազանցությունը, ապա կարելի է խոսել Տիգրան II-ի արքունիքի իշխանական աստիճանակարգի մասին, որի առաջին հարթակին կանգնած էին առանձին աշխարհների և երկրների կառավարիչները: Նրանց արտարքունական կշիռն աստ կերպափոխվել էր արքայի անձի սպասավորությամբ, զի արքունական համակեցության կենտրոնական կառույցը, կրկնենք մեկ անգամ էլ, արքայի անձն էր: Հենց դա էլ ապահովել էր հիշյալ չորս զինակիր-թիկնապահների (σωματοφύλακες) առանձնահատուկ կարգավիճակը⁸⁰: Կարգավիճակ, որը հույն հեղինակը ձգտում է ներկայացնել իբրև ստրկական անարգանք:

Ներքին արքունիքի կառույցի մասին մեր պատկերացումները հնարավոր է ընդարձակել ի հաշիվ Խորենացու տեղեկության՝ չմոռանալով, հարկավ, դրա նկատմամբ զգուշավոր մոտեցման անհրաժեշտությունը: Ինչպես նշել ենք վերը, նրա արքունագիտական պատկերացումները բավական հստակ են: ԽՆդիրն այն է, թե դրանց որ մասը կարելի է անվերապահորեն վերագրել Արտաշիսյաններին: Հավանական պատասխանի ակնկալիքով, կարծում ենք, հարցը նպատակահարմար է վերաձևակերպել: Այն է՝ Պատմահոր վկայություններն ի՞նչ չափով են զուգահեռվում Ժամանակի այլ արքունիքների (հատկապես Սելևկյան) մասին առկա տեղեկության հետ:

Վաղարշակ արքայի կառավարմանը նվիրված նրա հատվածը, իրավամբ, կառուցված է ըստ ներքին և արտաքին արքունիքների հստակ տարանջատման սկզբունքի: Առաջինի կազմում պարառված են արքայի անձը սպասավորող «մտերիմ ծառայք»՝ «զգեցուցանողս», «ի վերայ որսոց», «ի վերայ կուտից», «որք արծուիս առաջի նորա կրեին», «որ առաջի թագաւորին պատրաստէր զըմպելիս», «ի վերայ զենեւանաց», «բազեակիրս եւ բազէակալս», «ամարայնոցաց պահակս եւ ձիւնակիրս»: Նան՝ «ներքինիս»: Նան՝ «թիկնապահս» և «զունդս անուամբ արքունի» [Խոր., II, 7, 7, 18]:

Մերձավոր սպասավորների վերջին երկու խմբի կապակցությամբ, կարծում ենք, պատշաճ է վերհիշել անտիկ պատմիչների վկայությունները: Գրանց

79 Գարստությունը, շռայլությունը և ճոխությունը հելլենիստական միջավայրում ընկալվում էին իբրև արքայի զորության, ներունակության և օրինականության ցուցիչներ: Տե՛ս J. v. **Kruender**, S.57; T. **Spawforth**, The Court of Alexander the Great between Europe and Asia, in- The Court and Court Societies in Ancient Monarchies, p.94.

80 Այս կապակցությամբ կրկին ցանկանում ենք հատկանշել Աքեմենյանների մերձավոր միջավայրը: Աստ արքայի զինակիրները համագրվում էին «ամենափառապանծ» ընտանիքների շառավիղներից, որոնք արքունի աստիճանակարգում զբաղեցնում էին բարձրագույն հարթակները: Տե՛ս M. **Brosius**, op.cit., p.29.

անդրադարձել ենք՝ լուսաբանելով Տիգրան II-ի և Արտավազդ II-ի դարաշրջանի ռազմաքաղաքական այլևայլ իրողություններ: Արդ վերջիններս ներկայանում են իբրև արքունական միջավայրի կարևորագույն բաղկացուցիչներ: Այսպես, Արտաշիսյան արքաներին հանապազ առընթեր էր վեց հազարանոց ընտիր այրուծի, որի հիմնական խնդիրն էր պահպանել նրանց անձը: Այդ գորագույնի ուղեկցությամբ, օրինակ, Ք.ա.69 թվականին Տիգրան արքան Ասորիքից շտապեց Մեծ Հայք՝ տեղեկանալով Լ. Լուկուլլուսի հարձակման մասին: Նրա հրամանով հենց վերջինս ճեղքեց հռոմեական զորքի շղթան և շրջափակված մայրաքաղաքից դուրս բերեց արքայի կանանոցը և զանձերը [App., Mithr., 85]: Դրա ուղեկցությամբ Ք.ա.54 թվականին Արտավազդ արքան ժամանեց Մ. Կրասուսի զորակայանը [Plut., Crass., XIX, 1-3]: Կարծում ենք, այս զորագունդը համադրելի է Աբեմենյանների **բյուր անմահներին** և Սելևկյանների **գավականց արքայի**:

Ինչ վերաբերում է մյուս զորագնդին, ապա դրա տակ, կարծում ենք, առավել հավանական է տեսնել այն տասը հազար այրուծին, որն Արտավազդ արքան հավելյալ խոստանում էր մերթ Մ. Կրասուսին, մերթ Մ. Անտոնինուսին [Plut., Crass., XIX, 2; Ant.,]: Դրա գործառույթը բացահայտվում է Պատմահոր մեկ այլ բանաձևով՝ «գունդս եւ պահապանս դրան արքունի»։ Կոչվում էր Ոստան և նրա ռազմիկներն էին «ի զարմից թագաւորաց»՝ «ժամանակս ընդ ժամանակս ժառանգութիւն ի հարանցն ընկալեալ գիւղս եւ դաստակերտս» [Խոր., II, 7, 18]⁸¹: Համաձայն Պատմահոր՝ այս զորագունդը բաղկացած էր չորս միավորից: Բացառված չէ, որ արքային ամենուր ուղեկցող վերոհիշյալ չորս զինակիր-թիկնապահները հենց դրանց հրամանատարները լինեին: Բացառված չէ նաև, որ Մեհրուժան Չարեհյանը, ով երկու կամ երեք հազար հեծելազորով ուղարկվեց Լուկուլլուսին ընդառաջ և քաջաբար զոհվեց, նրանցից մեկը լիներ [Plut., Lucull., XXV, 2; App., Mithr., XII, 85]: Ասվածին հավելենք, որ աշխարհատեսական իմաստով այս երկու զորագնդերը թերևս կազմում էին «արանց այն միջավայրը», որն ընկալվում էր իբրև հայոց ընկերային գոյակարգի կայունության երաշխիքը⁸²:

Արտաքին արքունիք: Սկսվում էր «յետ կարգելոյ գտունն թագաւորի» [Խոր., II, 8, 2]: Արդի եզրաբանությամբ՝ այն ներկայացնում էր Մեծ Հայքի կառավարման համալիրի վերին հարթակը: Յավոք, դրա ուսումնասիրությունը նույնպես լծորդված է դժվարությունների հետ: Չի անտիկ սկզբնաղբյուրների տեղեկությոն այս հարցում նույնպես ծայր աստիճան սուղ է: Ինչ վերաբերում է Խորենացուն և վաղ միջնադարի հայոց այլ պատմիչներին, ապա նրանց ներկայացրած պատկերը բավական հեռու է լիարժեքությունից: Ուստի ստիպված ենք ապավինել բաղդատական արքունագիտության տվյալներին:

Նման այլ իշխանական միջավայրերի, Մեծ Հայքի արտաքին արքունիքը նույնպես պարառում էր ռազմավարչական ավագանու երկու խմբավորում: Առաջինը ներկայացնում էր կառավարման կենտրոնական մարմինները՝ կարևորագույն գործակալությունները: Երկրորդը՝ երկրի կարևորագույն վարչական միավորների (աշխարհներ) նախարար-կառավարիչներին:

81 Տե՛ս **Ա. Գ. Բերիխանյան**, Древнеармянские востаники, ВДИ, 2(1956), с.52-58.

82 Այլ խոսքով՝ ընդ ձեռաց Արտաշիսյան արքայի մշտապես կազմ ու պատրաստ կար տասնվեց հազար ծանրազեն հեծելազոր: Ընդունված է կարծել, թե հայերը դա փոխառել էին պարթևներից: Վերջիններիս բոլոր հաղթանակները հռոմեական լեգիոնի նկատմամբ ձեռք էր բերվել իրենց քառասուն հազարանոց հեծելազորի շնորհիվ, որի նմանը չկար Արևմուտքում: Տե՛ս **A. D. H. Bivar**, Cavalry Equipment and Tactics on the Euphrates Frontier, Dumbarton Oaks Papers, 26(1972), pp. 272-276.

Առաջին խմբին, անտարակույս, անդամակցում էին սենեկապետը, դիվանապետը, քրմապետը, «իրաւարարս ի տան արքունի»։ Նաև՝ թագադիր-թագակապասպետը, ով արքայի դայակն ու խորհրդականն էր, իսկ անհրաժեշտության պարագային՝ կարևոր գործերի հանձնակատարը։ Կասկածից վեր է, նրանք բոլորը գործառույթում էին ընդ իշխանությանը հազարապետի, ում վստահված էին «զամենայն գործս տանն արքունի» [Խոր., 53,11]։ Նաև՝ ողջ Մեծ Հայքը, զի էր «հազարապետն ամենայն երկրին»՝ «աշխարհատեսն ինամակալութեանն, աշխարհաշէն աշխարհատած դեհկանութեանն, շինականաշէն» [Բուզ., IV, 2, 7]։

Եվ տվյալ առումով Արտաշիսյանների արքունիքը չէր տարբերվում ո՛չ Աքեմենյանների, ո՛չ էլ Սելևկյանների արքունիքից։ Այս լույսով, կարծում ենք, նոր իմաստ են ստանում որոշ հանրահայտ փաստեր։ Այսպես, Ք.հ. 2 թվականին Արտագերք ամրոցի պատերի տակ Գալուս Կեսարի հետ բանակցությունների էր եկել գորավար Ադրոնը։ Եվ քննարկման խնդիրը միայն արքայական գանձերը չէին, ինչպես ներկայացնում են անտիկ հեղինակները [Dio Cass., LV,10a,6; Strabo, XI, 14, 6]։ Նա հանդես էր գալիս արքունիքի և համայն երկրի անուրից։ Իսկ նման լիազորություն, արքայից բացի, պատշաճում էր թերևս հազարապետին միայն⁸³։ Հարկավ, այս խմբին պատկանել են նաև ուրիշ գործակալություններ։ Սակայն աստ կանգ առնենք, զի բավարար փաստեր չունենք։

Երկրորդ խմբին անդամակիցների վերաբերյալ ունենք մի քանի հատուկեմտ, բայց ստույգ վկայություն։ Այսպես, Հյուսիսային Միջագետքի (Մծբին նստավայրով) կառավարիչ էր նշանակված Տիգրան II-ի եղբայր Գուրասը [Plut., Lucull., XXXII,4; Dio Cass.,XXXVI,6,3]։ Ասորիքի կառավարումը հանձնարարված էր Բագադատեսին՝ արքայի դայակին [App.,Syr.,48]։ Իսկ շրջապատված Տիգրանակերտի պաշտպանությունը վստահված էր Մանկայոսին, որի ծագման մասին ոչինչ վկայված չէ։ Նրանք երեքն էլ կառավարում էին նախ և առաջ **ըստ իրենց կարգի** (ἀξιώματι)։ Այսինքն՝ արքայի հետ ունեցած մերձավորության աստիճանի, որն ի տեղի և պահի վերածվել էր պաշտոնի։ Ճշգրիտ ձևակերպմամբ՝ գորավար-կառավարչի (στρατηγός) և պահապանի (φύλαξ)⁸⁴։ Անտարակույս, այդ խմբին անդամակցում էին հայոց ավագանու բազում այլ ներկայացուցիչներ։ Սակայն այդ մասին չունենք հավաստի տեղեկույթ։

Ներքին և արտաքին արքունիքների հակասություն-համագործակցությունն ավագանու տարաստիճան կառույցին հաղորդում էր շարժ և ճկունություն։ Եվ ինչպես նշել ենք այլ կապակցությամբ՝ արքայական իշխանությանն այն ընձեռում էր խուսանավման հնարավորություն և ազատություն⁸⁵։ Համեմատական արքունագիտության փորձը վկայում է, որ նման բազմաչափ հարաբերությունները հաճախ հանգուցալուծվում էին արքունի խորհրդում⁸⁶։ Այն գործառույթ էր նաև Արտաշիսյան արքունիքում։ Այդ մասին առկա է հույժ արժանահավատ տեղեկույթ,

83 Նման իշխանական լիազորությունը, կրկնենք մեկ անգամ էլ, գալիս էր սելևկյան միջավայրից։ Աքեմենյան արքունիքում հազարապետը լոկ արքայական քիկնագորի հրամանատարն էր։ Տե՛ս **M. Brosius**, op.cit. pp. 27-29։ Կարծում ենք, նույն կարգավիճակն ուներ Գիմաքսյան նահապետը (Demonax praefectus) Կալիզուլայի դարաշրջանի (37-41 թթ.) ինքնավար Մեծ Հայքում [Tacit., Ann., XI, 8-9]։ Տես **Ռ. Մանանդյան**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ.1, Եր., 1944, էջ 320։

84 Տե՛ս **R. Strootman**, op.cit., p. 82.

85 Տե՛ս **Ա. Ստեփանյան**, Քաղաքակրթական հավասարակշռության հիմնախնդիրը Մեծ Հայքում։ Մաս III. Համառեն հավասարակշռության պահպանման ճիգը Արտավազդ II-ի դարաշրջանում, Վե՛ն, 3(2010), էջ 67-68։

86 Տե՛ս **Ch. Habicht**, op.cit., p.36.

որը, սակայն, չի դարձել սևեռումի առարկա: Այսպես, խոսելով Տիգրանակերտի ճակատամարտին հայոց նախապատրաստության մասին՝ Պլուտարքոսը վկայում է. «[...] հույներով, սնապարծությամբ և բարբարոսական հոխորտանքով լի էին ինչպես արքայական խնջույքները, այնպես էլ խորհուրդները» [Plut., Lucull., XVI,4]: Եթե մի կողմ թողնենք պատումի բացասական երանգավորումը, ապա հստակ ուրվագծով ներկայանում են արքունի երկու հաստատություն՝ խնջույքը և խորհուրդը (τὰ συμπόσια, τὰ συμβούλια): Մանրամասների մասին ոչինչ հայտնի չէ: Կասկածից վեր է, դրանց անդամակցում էին արքունիքի այն անդամները, որոնք ունեին գահի նկատմամբ մերձավորության առավել բարձր աստիճան: Չբաղեցնում էին իրենց պատշաճող բարձր բարձերը, մասնակցում պետական կառույցի խնդիրների քննարկման և որոշումներ կայացնելու գործընթացին⁸⁷:

Արքունի աստիճանակարգն ուներ իր հստակ մշակված իմաստանշանային կողը, որը դրսևորվում էր խոսքի, պահվածքի, կերակրի, զարդերի և հագուստի մեջ⁸⁸: Կարծում ենք, այս առումով վատահոբյուն է ներշնչում Պատմափոր տեղեկույթը: Խոսելով Արտաշես I-ի գահակալության մասին՝ նա հատկանշում է. «Տայ եւ առնն քաջի եւ պատուականի Արգամայ խոստացեալ գահն երկրորդական եւ պսակ յակնթակապ, եւ զինդ յերկոսին ականջսն, եւ կարմիր զգեստ միոյ ոտինն. տարգալ ունել ոսկի եւ պատառաքաղ, եւ ոսկեղինաւք ըմպել նուազաւք: Եւ ոչ ինչ ընդհատ յայսց պատուոց տայ դայեկին իւրում Սմբատայ, բայց միայն յերկուց գնդաց եւ ի կարմիր կաշկէ» [Խոր., II,47,3-5]: Տարբերությունների կարգը, հարկավ, սրանով չէր սահմանափակվում, զի հայոց ներարքունական աստիճանակարգը բավական բարդ ու բազմազան էր:

Արտաշիայան արքունիքի մասին ասելիքի տրամաբանական հետազոծող հստակեցնելու նպատակով կրկնենք մեկ անգամ ևս: Այդ միջավայրում ավագանու տարբերությունների հիմնական սահմանագիծն անցնում էր տոհմիկ և ծառայողական ենթախմբերի միջև: Այն շարժում էր և անկայուն. հակվում էր մերթ դեպի մեկ, մերթ՝ մյուս բևեռը: Սակայն պատմության ճգնաժամային պահին ավագանին, այնուամենայնիվ, միակամ էր և միամիտ: Այդժամ բացահայտվում էր նրա անմիջական կապը ազգային ինքնության և պետականության հետ: Ծիշտ այսպիսին էր իրադրությունը վերջին Արտաշիայանների ժամանակ: Հիշենք, Ք.հ. I դարի սկզբին ավագանին անվերապահորեն մերժեց հայոց գահի ինչպես հռոմեական, այնպես էլ պարթև հավակնորդներին: Պահպանեց գահը և հանձնեց իր թեկնածուին՝ Չենոն-Արտաշեսին (Ք.հ. 18 թ.):

Ինքնաբավության այս միտումը, սակայն, հավասարակշռվում էր արքունիքի ներգրավվածությամբ, մի կողմից՝ արքայական, մյուս կողմից՝ տեղական իշխանական կառույցների ծիրում: Կապող օղակ էր դրանց միջև: Այդ բևեռներից առաջինի մասին պատրաստվում ենք մանրամասն խոսել ստորև: Ինչ վերաբերում է երկրորդին, ապա դրա քննությունը դուրս է ներկա հետազոտության սահմաններից: Ուստի բավարարվենք ընդհանուր պատկերով միայն: Մեծ Հայքի հարյուր

87 Հանձնատակա արքունագիտության տվյալներով՝ պետական այս մարմինը տարբեր դարաշրջաններում և արքունական միջավայրերում մշտապես առկա էր: Հարկավ՝ լիազորությունների տարբեր պարագծով: Հելլենիստական միջավայրում այն նպատակ ուներ նախ և առաջ օրինակամացնելու գահակալի «նիզակի իրավունքը»: Իրավունք, որի հիմամբ կառուցված էր տերության իրավական ողջ համակարգը: Տես G. Herman, The Court of Hellenistic Age, pp.208-209.

88 Տես K. Vössing, Mensa Regia. Das Banket beim hellenistischen König und beim römischen Kaiser, München/Leipzig, 2004, S.95-97.

քսան նախարարություններից յուրաքանչյուրը արքունիքի մանրակերտն էր՝ իր վարչական, ռազմական, դատական և տնտեսական գործառնություններով: Արքայից և արքունիքից եկող իշխանական խթաններն այն փոխանցում էր ավելի ստորակա ընկերային կառույցներին՝ ընդհուպ գյուղական համայնքներ: Հավելենք, որ քաղաքներն ունեին ինքնավարության բարձր կարգավիճակ⁸⁹: Եվ ասվածը հատկապես վերաբերում էր երկու մայրաքաղաքներին:

4. Արտաշիսյան արքան և իր ընտանիքը

Արտաշիսյան արքայի անձը հասարակական գիտակցության մեջ արմատավորվում էր արարչագործական երանգներով: Արդեն հատկանշել ենք. նման հեյլենիստական այլ գահակալների, նա ընկալվում էր իբրև իր համակեցական միջավայրի հիմնական ստեղծագործ ուժը: Հիշենք, փրկչական գործառնություն լծորդվում էր արքայատան հիմնադրի նվաճողական ձեռնարկումների հետ: Եվ ամեն մի նոր գահակալ ուղղակի կամ ծխական առումով կրկնում էր դա: Հայրժ կապ էր հաստատվում ինչպես նրա, այնպես էլ հեյլենիստական աշխարհի իշխանական արքետիպի՝ Ադեքսանդր Մակեդոնացու կերպարի հետ:

ա) Արքայական իշխանության գաղափարական հիմնավորումը

Արտաշիսյանների իշխանության իրավական հիմքը համարվում էր Արտաշես I-ի կողմից Մեծ Հայքի տարածքի նվաճման և միավորման գործունեությունը: Այլոքն՝ Մեծ Հայքը դիտարկվում էր իբրև **նիզակով նվաճյալ երկիր** (*χώρα δοικτικήτος*): Տվյալ իրավական նորմն իրավական գործառնության վերածման և երկրում արքայի բացարձակ իշխանության հաստատման նպատակով հեյլենիստական գահակալներն օգտագործում էին ինչպես քարիզմատիկ, այնպես էլ պաշտոնեական պատրիմոնիայի հնարավորությունները⁹⁰: Եվ Արտաշես արքան բացառություն չէր: Գալով իշխանության՝ նա երկրում սահմանեց իր նախնյաց (արքայատան) պաշտամունքը: Տաճարներում դրվում էին նրանց պատկերները և մատուցվում զոհեր: Մյուս կողմից, երկրին տվեց հստակ վարչական կառույց. հարյուր քսան նախարարություն և (առավելագույնս) բանական կազմակերպված պաշտոնեություն: Վերջիններիս գործառնությունը իշխանական ուղղահայացը տարածվում էր արքունիքից ընդհուպ հեռավոր ծայրամասեր: Արքան անում էր ամեն ինչ պատրիմոնիայի երկու տարատեսակները հավասարակշռելու համար⁹¹:

89 Այս հիմնախնդիրները հետազոտված են բավարար մակարդակով: Տե՛ս ի մասնավորի **С.Т. Еремян**, Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху, Известия АН Армянской ССР (Общественные науки), 11(1948), с. 33-73.; **Он же**, Развитие городов и городской жизни в древней Армении, Вестник древней истории, 3(1953), с.11-31; **Գ.Սարգսյան**, Գին Զայատանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին, Եր., ԶՍՄ ԳԱ հրատ., 1962, 94 էջ; **Նույնի**, Զայատանի սոցիալ-տնտեսական կարգը հեյլենիստական դարաշրջանում, ԶԺՊ, հ. 1, էջ 635-666:

90 Տե՛ս **R. Strootman**, op.cit., p.8-9.

91 Տե՛ս **Ա. Ստեփանյան**, Արտաշիսյան դարաշրջանի Մեծ Զայքի ներքին կառույցի և արտաքին քաղաքականության մի քանի հիմնահարցերի մասին, «Պատմություն և կրթություն», 3/4 (2066), էջ 6-7:

Համենայնուայն էլ համար ցանկանում ենք ուշադրություն հրավիրել հերկյալ պարմական փաստին: Նույն Զ.ա. II դարում հեռավոր Չինաստանն սկսեց ընթանալ միանգամայն այլ ուղիով: Վու կայսեր նախաձեռնությամբ (Զ.ա.141-87 թթ.) ասոր անցկացվեցին բարենորոգումներ, հարդյունս որոնց իշխանական ուղղահայացն սկսվեց կազմավորվել բացառապես ըստ պաշտոնական պարփմունիայի սկզբունքի: Պաշտոնեության ներկայացուցիչները «ծագում էին ոչմիտեղից»: Եվ նրանց տեղն աստիճանակարգում որոշարկվում էր համապարաստան գիտելիքների առկայությամբ: Դրանց հասարակարման համար հավակնորդը պարտավոր էր հանձնել բազմաթիվ և բազմապիսի քննություններ, որոնց հիմքում Կոնֆուցիուսի վարդապետությունն էր: Հավելելնք, որ այս համակարգը շարունակեց իր գոյությունը չինական պարմության ողջ հերպաս ընթացքին⁹²:

Սակայն արքայական իշխանության գորեղացմանը համընթաց այդ հավասարակշռությունն սկսեց խաթարվել հոգուտ ծառայողական ավագանու: Եվ Տիզրան II-ի օրոք դա արդեն կայացած իրողություն էր: Այս մասին մանրամասն խոսել ենք և հատկանշել, որ խաթարումն իր հերթին հանգեցրեց արքայական իշխանության ծայրահեղ բացարձակեցման: Հարդյունս՝ արքաներն սկսեցին հորջորջվել Աստված: Եվ աստիճանաբար մշակվեց քարոզչական մի ողջ համալիր, որը խնդիր ուներ օրինականացնել տվյալ տեղաշարժը⁹³:

Ինչպես ցուցանում է հետազոտական փորձը՝ այդ համալիրի կարևոր բաղադրիչներից էին գաղտնածեսերը, որոնց մասին սկզբնաղբյուրներում առկա են թույլ ակնարկներ միայն: Դրանց համադրմամբ ուրվագծվում է մի պատկեր, որն արժանի է լուրջ ուշադրության: Արտաշես I-ի մասին իր շարադրանքում Պատմահայրը խոսում է մանուկ արքայի նվիրագործության երեք աստիճանի մասին՝ **հովիվ, զինվոր, արքա** [Խոր., II, 3714-15; 47, 2]⁹⁴: Նա մեկնարկում է «Հայոց երգն վիպասանաց»-ից: Եվ պատահական չէ, որ նրա տեղեկույթն ուղղակի աղերսներ ունի հնդեվրոպական հնագույն պատկերացումների հետ: Պատկերացումներ, որոնք առավել հստակ պահպանվել են «Մասնա ծռերի» խորքային շերտերում: Հայտնի է, ասքի հերոսներն անցնում էին կայացման ճիշտ նույն աստիճաններով⁹⁵:

Ասվածին հավելենք, որ նվիրագործության «որսորդ/հովիվ» շրջափուլի վերաբերյալ ունենք նաև մեկ այլ հավաստի տեղեկույթ: Դրանում այն համաբերված է Նավասարդյան տոնակատարության միջավայրին՝ տարեսկզբին, Նպատ լեռան լանջերին հրավիրվող առաջին աշխարհաժողովին: Աստ ի մի էին գալիս գորք/ժողովուրդը, ավագանին և արքան: Նա կրկնում էր իր կարգավիճակի համար արքեստիպային որսի գործողությունն ի վերայ սրբազան եղանց եւ եղջերուաց: Հարում էին փողեր, հարկանում թմբուկներ, «որպես արեւն էր թագաւորաց»: Այս շրջափուլը խորհրդանշում էր արքայի միասնությունը գորք/ժողովրդի հետ⁹⁶: Եվ վերջինս վերահաստատում էր իր նախնական իրավունքը՝ մասնակցելու հանրույթի համար կենսական հիմնախնդիրների լուծման գործառույթին: Այս առումով, կարծում

92 Տե՛ս H. van Ess, The Imperial Court in Han China, in-The Court Societies in Ancient Monarchies, pp.242-245.
93 Տե՛ս Ա. Ստեփանյան, Քաղաքակրթական մարտահրավերը Տիզրան II-ի դարաշրջանում (պատմություն, գրույթ, մեկնություն), Տիզրան Մեծ, Տիզրան Մեծի գահակալության 2100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., 2011, էջ 167:
94 Տես Ա. Ստեփանյան, Քաղաքակրթական հավասարակշռության հիմնախնդիրը Մեծ Դայքում: Մաս I. Ներհանրութային հոմեոստասիսի հաստատումը, Վեմ, 3(2009), էջ 52-53:
95 Տե՛ս Ա. Ա. Степанян, Развитие исторической мысли, с.75-81.
96 Ազգաբանգեղոսի գրույթում պահպանվել է Աշխարհաժողովի բովանդակային բնութագիրը, որը, կարծում ենք, խոր արմատներ ունի. «Թագաւորն եւ արքայագուրն եւ մեծամեծքն եւ նախարարն եւ ազատքն եւ զարքն ամենայն»[Ազգաթ., 104,5]:

ենք, պատեհ է հիշել պատմական հետևյալ փաստը. Արտավազդ II արքան արժանացավ աշխարհաժողովի պարսավին «վասն պղերգութեանն» [Խոր., II, 22, 5]:

Ենթադրելի է, որ հարդյուն առաջին շրջափուլի՝ Արտաշիսյան արքան սերտ մտահոգևոր կապի մեջ էր մտնում իր իսկ երկրի հետ: Անում էր դա Մեծ Հայքի «կեցուցիչ» Անահիտ դիցուհու միջնորդությամբ: Եվ արժանանում «ճշմարիտ հայ» պատվանման, որի մասին, արդեն խոսել ենք, բազում վկայություններ կան անտիկ սկզբնաղբյուրներում⁹⁷:

Սրբազան որսը պարբերաբար կրկնվում էր նաև նվիրագործության երկրորդ՝ «զինվոր» շրջափուլի ծիսակարգում: Այն նվիրված էր Վահագնի պաշտամունքին: Դրամագիտական նյութի և Պատմահոր վկայությունների համաբերմամբ հանգել ենք այն եզրակացության, որ Տիգրան II-ի օրոք այս աստվածության դերը հայոց պաշտոնական կրոնում շեշտակի աճել է՝ ի հաշիվ Միհրի⁹⁸: Արքան և նրա մերձավորների շրջանակն սկսել են նեկայանալ իբրև Վահագնի նվիրյալներ: Այդ իրողությունը պարբերաբար օրինականացվում էր տարբեր տոնակատարություններով, որոնք ուղեկցվում էին որսով: Ընդամին, որսի առարկան Վահագնին նվիրված սրբազան կենդանիներն էին՝ վարազը (կինճ) և իշավայրին (գռ): Հավատ կար, թե դրանց միջոցով կարելի է հաղորդակցվել այդ աստծո ստեղծագործ կարություններին: Կարություններ, որոնք լծորդված էին հաղթության, կարգի և արդարության հետ⁹⁹: Ասվածի դիտանկյունից հույժ հատկանշական է Պատմահոր մեկ այլ վկայություն, որը ծագում է հայոց հին պատմական ավանդույթից: Խոսելով Արտավազդ II-ի «զիմաստութենէ եւ զքաջութենէ եւ զբարի յիշատակաց անփոյթ» բնության մասին՝ դրանում շեշտված է. «[...]մարից եւ եղեգնա պուրակաց թափառեալ շրջեր եւ առապարաց, զիշավայրիս եւ զխոզս արածելով» [Խոր., II, 22, 4]: Եթե մի կողմ թողնենք արքայի բացասական գնահատականը, ապա հստակ ուրվագծվում է Վահագնին նվիրված ծիսակատարությունը: Ենթադրելի է, որ հրմթացս դրա արքան և նրա մերձավորները դառնում էին «վարազակերպ»:

Ասվածը հաստատվում է Ազարանգեղոսի վկայությամբ: Ի հարուցումն հանցանաց իւրոց՝ Աստծո կանքով Տրդատ III արքան (298-330 թթ.) «[...] ելեալ ըստ մարդկային բնութիւնս արարաքս ի նմանութիւն վայրենի խոզաց, իբրեւ զնոսս ընդ նոսս ի մէջ նոցա երթեալ բնակէ: Եւ այնուհետեւ մտեալ յեղեգն, խորանարակ լեալ անհնարին անզգայութեամբ, մերկ զանչն ընդ դաշտն կոծելով» [Ազար., 20, 3]: Կասկածի եւրակա չէ, այս պարագային գործ ունենք Վահագնին նվիրված հնագույն գաղղնածեսիքիսրոնեական «վերընթերցման» հետ¹⁰⁰:

Տվյալ շրջափուլը նույնպես սերտ աղերս ուներ Նպատի Աշխարհաժողովի հետ: Եվ խորհրդանշում էր արքայի միասնությունն այս անգամ էլ ավագանու

97 Տե՛ս **Ա. Ստեփանյան**, Քաղաքակրթական հավասարակշռության հիմնախնդիրը Մեծ Դայքում: Մաս I. Ներհանրության հոմոնոտասիսի հաստատումը, էջ 43: Իբրև ասվածի տիպաբանական զուգահեռ՝ ցանկանում ենք մատնացուցել «ճշմարիտ պարսիկ», «ճշմարիտ իսրայելցի» եզրույթների սրբազնային և ծիսական ընթրումը: Տե՛ս **E. Bock**, The Three Years. The Life of Christ between Baptism and Ascension, London, 2005, pp. 192-193.

98 Տե՛ս **Ա. Ստեփանյան**, Քաղաքակրթական հավասարակշռության հիմնախնդիրը Մեծ Դայքում: Մաս III. Դամաստեոս հավասարակշռության պահպանման ճիգը Արտավազդ II-ի դարաշրջանում, էջ 52-53.

99 Տե՛ս **J. Russel**, Zoroastrianism in Armenia, Cambridge (MA), 1987, pp. 189-192.

100 Տե՛ս **J. Russel**, op.cit. p. 198.

հետ: Նրանք կազմում էին ռազմիկների սրբազան միություն, որի համաբերման կարևոր միջավայրներից մեկն էլ արքայական խնջույքն էր:

Երրորդ շրջափուլը ներկայացնում էր արքա/կառավարչին, բայց տարանջատյալ թե՛ գործ/ժողովրդից, թե՛ ավագանուց: Ենթադրելի է, նա մտահոգևոր սևեռումով վերապրում էր սեփական տոհմի պատմությունն ու բախտը: Դառնում ճշմարիտ Արտաշիսյան՝ պատրաստ կապող օղակ լինելու (*νόμος* չմիսխոս) Մեծ Հայքի և տիեզերակարգը խորհրդանշող Արամազդի միջև¹⁰¹: Համաձայն առասպելամտածողության կանոնի՝ աստ իր բարձրակետին էր հասնում արքայի մտահոգևոր ճանապարհորդությունը կենաց ծառի ուղղահայացով: Ծառ, որը միավորում էր տիեզերքի և համակեցական կյանքի բոլոր մակարդակները: Նրա ճյուղերին սովորաբար պատկերվում էր երկու թռչուն՝ սևեռված դեպի երկինք: Համոզված ենք, ասվածն իր պատկերագրական արտահայտությունն է գտել Արտաշիսյան արքաների խույրի վրա. երկու արծիվ (կամ շահին), որոնք ակնապիշ նայում են տիեզերական լույսի աղբյուրին¹⁰²: Հարկ ենք համարում նկատել, որ ճիշտ նույն պատկերագրությունն առկա է նաև գրադաշտական ավանդույթում՝ Մարգարեի ծննդյան և նվիրագործության առնչությամբ [Denkart, II, 24-34]¹⁰³:

Եթե ենթադրությունների այս շարքն արտահայտում է պատմական եղելույթունը, ապա կարող ենք սխալի չնշին հավանականությամբ պնդել, որ հենց Նպատի աշխարհաժողովում արքան ստանում էր իր խույրը (*օրծի* *πάρρα*): Կարծիք կա, որ դա վերածվել էր կայուն ծիսակարգի և կրկնվում էր ամեն տարի: Այլոքեն՝ տարեսկզբին արքան ծիսականորեն իջեցվում և կրկին գահ էր բարձրացվում¹⁰⁴: Հայր՝ հատկանշվում էր նրա «կախվածությունը» Նպատի Աշխարհաժողովից: Հավելենք մի նրբերանգ ևս. արքայի նվիրագործության ծիսակարգը դեկավարում էր նրա դայակը, ով Բագրատունյաց տոհմից էր: Հուսկ մի նոր եզրակացություն. Բագրատունիներին ներհատուկ էր նաև քրմական գործառույթ¹⁰⁵:

Իրավիճակը փոխվեց արքայի իշխանության բացարձակեցմանը համընթաց: Անգամ ծիսական կախվածությունը տոհմիկ ավագանուց նկատվում էր անհարիր ու ժամանակավրեպ: Իրեն փրկիչ(*σωτήρ*), հայտնյալ [Աստված](*ἐπιφανής*) և Աստված (*θεός*) հռչակած Տիգրան II-ին և Արտավազդ II-ին անհրաժեշտ էր հաստատութենական մեկ այլ հենարան: Այդպիսին դարձավ Աշխարհաժողովի նոր տարատեսակը՝ մայրաքաղաքի Հրապարակը (*ἀγορά*): Այն պարառում էր մայրաքաղաքի բոլոր լիիրավ քաղաքացիներին, որոնք հայոց համակեցության ծիրում ունեին առանձնահատուկ դեր և կարգավիճակ: Այս միջավայրում ակնառու էր ռազմավարչական ավագանու գերակայությունը: Իսկ գահակալի կամքն այլևս անառարկելի էր¹⁰⁶:

Իրերի այս տրամաբանությունը հուշում է, որ հենց մայրաքաղաքի Հրապար-

101 Արեմենյան զուգահեռի մասին տես մանրամասն G.R. Garthwaite, op. cit., pp.43-49.

102 A. A. Степанян, К государственной политике царя Артавазда II, ՊԲՅ, 2(1989), с.42.

103 Համաձայնայնույն նույն աղբյուրի՝ Լույսը մարմնավորում էր Կոհու Սանան (Սրբազան միտքը): Տես Заратустра. Учение огня. Гаты и молитвы, Москва, 2002, с.63.

104 Տես A. A. Степанян, Развитие исторической мысли, с.96-97; A. Stépanian, Le traité de Randée et le couronnement de Tiridate l'Arsacide à Rome, Revue des Études Arméniennes, 9(1975/1976), pp. 212.

105 Նման պատկերացումները պահպանվել էին հայոց Դարձից հետո էլ: Հապացույց կարելի է մտնացուցել Չիրավի ճակատամարտի (370 թ.) Պատմահոր նկարագրությունը: Այն պատկերված է իբրև Աշխարհաժողով, որին ներկա են երկու բուրմ: Առաջինը հովվապետ Ներսես Մեծն է, ով ելել է «ի կատար լերինն Նպատայ» և աղոթում է Պապի գահակալության համար: Երկրորդը Սմբատ Բագրատունին է, ով «ջեռուցեալ որպէս պասկ» շամփրով «թագադրում է» դավաճան Սեհրուժան Արծրունուն[խոր., III,14,21]:

106 Տես A. A. Степанян, К государственной политике царя Артавазда II, с.43.

րակում էլ նա ստանում էր արքայական իր ապարոշը (διδάγμα): Այն խորհրդանշում էր գահակալների ինքնիշխանությունը և հավասար մասնակցությունը հելլենիստական աշխարհի քաղաքական, դիվանագիտական, մշակութային, կրոնական կյանքին¹⁰⁷: Տերության անկումը, տնտեսական փլուզումը տեղիք տվեցին ծառայողական ավագանու տկարացման: Համապատասխանաբար՝ նաև Հրապարակի: Սակայն իր հայկական քաղաքականության մեջ Հռոմը նախապատվությունը հաճախ հենց նրան էր տալիս: Ասվածի լավագույն ապացույցը Ջենոն-Արտաշեսի թագադրությունն էր: Արդեն լուսաբանել ենք. նա Նպատից հասցրել էր ստանալ իր խույրը: Իսկ Մեծ Հայք ժամանած Գ.Գերմանիկոսն ավարտին հասցրեց գահակալման ծիսակարգը՝ Հրապարակում նրա գլխին կապելով ապարոշը¹⁰⁸:

Երկու աշխարհաժողովների ծիսակարգի վերջին շեշտադրումը գահակալի անձի տարանջատումն էր համակեցական ամբողջից: Հելլենիստական Արևելքում մշակվել էր կրոնաիմաստասիրական մի համալիր՝ միտված օրինականացնելու այդ իրողությունը: Քանիցս անդրադարձել ենք. այն բավական հստակ ձևակերպմամբ պահպանվել է Փիլոն Աղեքսանդրացու գրություն՝ կառուցված ըստ գոյակարգի և Աքեմենյան տերության համակերպության սկզբունքի [Philo, De somnis, 140]: Ընդամին, համակերպության կարևորագույն բևեռներն են ամենակար Աստված և մեծ արքան: Սակայն նրանք անմիջական հարաբերություն չունեն սեփական տիրույթների հետ: Առկա է միջակա օղակ: Աստծո պարագային դա տիեզերական Բանն է (λόγος ὁ θεῖος), որը հաճախ ներկայանում է նաև իբրև ամենայն գոյի բախտը [Philo, De fuga, 66]: Իսկ արքայի պարագային՝ հազարապետը:

Ասվածի դիտանկյունից հետաքրքիր բացատրություն է ստանում Խորենացու մի «տարօրինակ» վկայություն: Համաձայն դրա՝ Արտաշես արքան իր որդիներից Վրուրին կարգել է հազարապետ, զի էր «այր իմաստուն եւ բանաստեղծ» [Խոր., II, 53.11]: Անտարակույս, կրկին հին մտահոգևոր հարացույցն է, որտեղ արքան Աստծո երկրային հարակն է, իսկ հազարապետը՝ Բանի:

Արքայական ընտանիքը: Սովորաբար դիտարկվում է երկու չափույթով՝ լայն և նեղ: Լայն առումով դա արքայատոհմն էր, որի տանուտերը հենց արքան էր: Եվ նրա իշխանության ներքո էին եղբայրները, քույրերը և նրանց զավակները: Աքեմենյան և Մելևկյան փորձը հուշում է, որ լուրջ վերաբերմունքի է արժանի Պատմահոր վկայությունն առ այն, որ նրանք ստանում էին «զմասն արքունի»՝ «հանդերձ առանձին մտից եւ ռոճկաց» [Խոր., II, 22, 2]: Ստանում էին նաև ռազմավարչական զանազան պաշտոններ¹⁰⁹: Լավագույն օրինակը Տիգրան II-ի եղբայր Գուրասն էր, ով ի կառավարումն ստացել էր Հյուսիսային Միջագետքը:

Նեղ իմաստով արքունիքը պարառում էր գահակալին, նրա կանանց և զավակներին: Ենթադրելի է, այն կառուցված էր ըստ խիստ աստիճանակարգի: Այս մասին մեր տեղեկույթը վերաբերում է հիմնականում Տիգրան II-ի ընտանիքին: Նախ՝ նրա կանանց, ովքեր իրենց կարգավիճակով ակնհայտորեն տարբերվում

107 Տե՛ս **M. Lemosse**, Le couronnement de Tiridate. Remarques sur le statut de protectorats romains, in- Mélanges en l'honneur de G. Gidel, Paris, 1961, pp. 455-468.

108 Տե՛ս **Ա. Ստեփանյան**, Քաղաքակրթական հավասարակշռության հիմնախնդիրը Մեծ Հայքում: Մաս IV. Մեծ Հայքը և իրադրությունը Եփրատի սահմանին՝ Բ.ա. I- Բ.հ. I դարերի շրջադարձին, Վեն, 1(2011) էջ 48-54:

109 Այս առումով ակնհայտ է զուգահեռը Աքեմենյանների հետ: Տե՛ս **M. Cook**, op. cit., p. 228.

էին միմյանցից¹¹⁰: Ստորին հարթակին արքայական հարճերն էին (παλλάκαι) [App., Mithr., 85]: Իբրև կանոն, նրանք տոհմիկ ծագումի էին, սակայն ծիսականորեն չէին անդամակցում արքայի ազնատական խմբին: Իրավական դիտանկյունից՝ նրանց կապը բնութագրելի է իբրև *connubium sine manu*¹¹¹: Ծնված զավակները, թեպետ արքայական շառավիղ, լիիրավ Արտաշիսյան չէին նկատվում: Երկրորդ հարթակին արքայի կանայք էին (γυναικες βασιλέως): Նրանց կապն, անտարակույս, բնութագրելի է իբրև *connubium cum manu*: Կանայք անդամակցում էին արքայի ազնատական խմբին¹¹²: Հարդյունս՝ ծնված զավակները համարվում էին Արտաշիսյան¹¹³:

Ի բաղդարություն ասվածի հավելենք հեղեյալը: Ջրադաշտական Իրանում ամուսնության այս տեսակներն ունեին իրենց զուգահեռները: Առաջինին համապարասխանում էր zantih ī čakarīh-ը, երբ կինը շարունակում էր պահպանել անդամակցությունն իր ազնատական խմբին: Հարդյունս՝ նրա զավակներն իրավականորեն պարկանում էին վերջինիս: Երկրորդին համապարասխանում էր pātixšāyīh-ը՝ ամուսնության լիարժեք փարսարեսակը: Կինը համարվում էր փան փիրուտի (katak-bānūk)՝ իր որդակի նյութական և իրավական ազատություններով: Նա և զավակները մրկում էին ամուսնու ազնատական խմբի մեջ՝ ճանաչվելով լիիրավ ժառանգորդներ: Առիթ ենք ունեցել լուսարանելու, որ ամուսնության փվյալ ձևերն առկա էին նաև Արշակունյաց դարաշրջանի Մեծ Հայքում¹¹⁴:

Երրորդ, ամենաբարձր հարթակին տիկնանց տիկինն էր (βασίλισσα), ում հետ արքան ամուսնանում էր ըստ առանձնահատուկ պայմանների և պայմանագրի: Դա նրան ապահովում էր առանձնահատուկ կարգավիճակ՝ իրավական, քարիզմատիկ, նյութական: Արքայատոհմի առաջին կինն էր, իսկ իր որդիները՝ գահի հիմնական հավակնորդները: Ի շարս Տիգրան II-ի կանանց՝ նման կարգավիճակ ուներ միայն Սիրիդատ Պոնտացու դուստր Կոնոպատրան: Նրա հետ արքան ամուսնացել էր արդեն հասուն տարիքում՝ հավանաբար Ք.ա. 93 թվականին:

Հույժ արդյունական ենք գտնում այն վարկածը, համաձայն որի տիկնանց տիկինը նույնպես անցնում էր նվիրագործությունների միջով¹¹⁵: Ամենայն հավանականությամբ, այդ մտահոգվոր գործառույթը Արտաշիսյանները ժառանգել էին Երվանդականներից: Հետքերն ակնհայտ են Արմավիրի արձանագրություններում: Նկատի ունենք դրանցում հիշատակվող քրմուհի

110 Ասվածը զուգահեռվում է նաև պարթև Արշակունիների արքունիքի տվյալներով: Տե՛ս **I. Huber**, op. cit., pp.492-495.

111 Գտնելով վերոպական գիտական ավանդույթին՝ տվյալ իրավական նորմը ներկայացրել ենք հռոմեական իրավունքի զբոլոյթով: Տե՛ս **Ա. Ի. Покровский**, История римского права, СПб, 1999, с.449-457.

112 Տե՛ս **Ա. Ի. Покровский**, ykas.com, с.458-464.; **W. Frier, Th. A. J. McGinn**, A Casebook on Roman Family Law, Oxford/New York, 2004, pp.20-21.

113 Ամուսնության իրավունքը թերևս ենթադրում էր նաև ապահարզանի հնարավորություն: Ասվածի դիտանկյունից, կարծում ենք, նորովի է ներկայացնում Տիգրան II-ի ընտանեկան կյանքի մի մանրամասն: Հայտնի փաստ է, Պոնպետոսի հաղթահանողտին (Ք.ա.59 թ.) ի շարս այլ գերիների՝ քայլում էր նրա կանանցից Չոսիմեն [Plut., XLV, 4]: Ամենայն հավանականությամբ, հարել էր Տիգրան Կրտսերի ապստամբությանը: Եվ ծեր արքան նրան հանձնել էր գերության՝ նախապես տալով զգիրս ապահարզանի:

114 Տե՛ս **Ա. Գ. Периханян**, Общество и право Ирана в парфянский и сасанидский периоды, Москва, 1983, с.84-98; **Ա. Ստեփանյան**, Ընտանիք-պետություն համաձևությունը V դարի հայ հասարակական մտքի մեջ. Մովսես Խորենացի, «Իրան նամեթ», 6(1993), էջ 9-11:

115 Տե՛ս **Գ. X. Саркисян**, Царица Эрато, с.219-221.

Փիլադելփոսին, ով Արտեմիս/Անահիտի երկրային հարակն էր¹¹⁶: Եվ արքայի հետ գտնվում էր սրբազան ամուսնության մեջ (ἑοργαμία): Ժամանակի պատկերացումների համաձայն՝ այդ ամուսնությունը գոյակարգի երկու հիմնարար հարթությունների՝ տիեզերքի և ընկերային համակեցության կայունության մտահոգևոր երաշխիքներից էր:

Տիգրան II-ի օրոք Վահագնի պաշտամունքի կարևորմամբ կերպավորվեց նաև այդ երաշխիքի բովանդակությունը: Ենթադրելի է, վերջինս արդ ներկայանում էր Արքա/Վահագնի և Թագուհի/Աստղիկի ծիսաէրոտիկ միասնությամբ: Սկզբունքորեն նույն իրավիճակը նկատելի էր և Տիգրան IV-ի արքունիքում, որտեղ վերադարձն Ապոլոն/Միհրի պաշտամունքին ակնբախ էր: Արքան ամուսնացած էր քրոջ հետ: Եվ այդ սրբազան ամուսնության ծիրում նա թերևս նույնական էր Ապոլոն/Միհրին: Այդ է հուշում քրոջ անունը՝ Էրատո: Վերջինս Ապոլոնին հանապազ առընթեր ինը մուսաներից մեկն էր: Ներկայացնում էր սիրային (Էրոտիկ) բանաստեղծությունը (Բանը)¹¹⁷: Հայսմ՝ հավանական է թվում այն միտքը, թե թագուհին հայոց համակեցական ամբողջի հետ արքայի կապի մարմնավորումն էր: Սակայն ի տարբերություն հազարապետի՝ նրա կապն առավելաբար քարիզմատիկ երանգավորում ուներ:

Ավաճառի լույսի ներքո ակնհայտ է դառնում Արտաշեսյանների արքունիքի կառույցի մեկ այլ առանձնահատկություն. դրանում (նման Աբեմենյան և Մելիկյան արքունիքներին) բավական ներգործուն էր «կանանց հարկաբաժինը»: Այս մասին մեր տեղեկույթը կրկին Տիգրան II-ի դարաշրջանից է: Խոսելով հելլենիստական նշանավոր ճարտասան Ամփիկրատես Աթենացու մասին՝ Պլուտարքոսը վկայում է. «[...] նա ապաստանեց Միհիդատի դուստր և Տիգրանի կին Կոնոպատրայի մոտ (πρὸς Κλεοπάτραν): Սակայն շուտով շնորհագուրկ եղավ: Եվ գրկված [այլ] հույների հետ շփումից՝ իրեն սովամահ արեց: Թաղվեց պատիվներով՝ ձեռամբ Կոնոպատրայի: Եվ հանգչում է անդ մի տեղանքում, որը կոչվում է Սափիոն» [Plut., Lucull., XXII, 5]: Ուսյալ և ինքնակամ արժանացին, հավանաբար, իր անհամաձայնությունն էր արտահայտել Տիգրան արքայի կառավարման համակարգի և մեթոդների նկատմամբ:

Ինչ վերաբերում է «այլ հույներին», ապա դրանք, ամենայն հավանականությամբ, բանաստեղծներ, դերասաններ, պատմագիրներ, իմաստասերներ և «մտավոր տեխնիկներ» այլ ներկայացուցիչներ էին: Դրանց ներկայությունը հիմք է տալիս մտածելու, որ տիկնանց տիկնոջ հարկաբաժինը հելլենիստական մշակույթի կենտրոն էր: Աստ մշակվում և ավագանուն էին փոխանցվում մտքի, պահվածքի և ճաշակի նոր հարացույցեր: Ժամանակաշրջանի եզրաբանությամբ՝ դա **հայեցողական կենսակերպի** (βίος θεωρητικός) միջավայր էր: Միջավայր, որի խոշորագույն դեմքը թերևս Մեթրոդորոս Սկեփսացին էր՝ սովիեստական իմաստասիրության, իրավունքի և բարոյագիտության նշանավոր ներկայացուցիչը, ով լքելով Պոնտոսը՝ նույնպես ապաստան էր գտել հայոց արքունիքում [Strabo, XIII, 1, 55; Plut., Lucull., XXII, 5]¹¹⁸:

Ի վերջո, այդ նույն միջավայրում ձևավորվել էր նաև արքայազն Արտավազդը: Երեք ավագ եղբայրների առկայությամբ նրա հավակնությունները գահի

116 Տե՛ս Ա. Ստեփանյան, Քաղաքակրթական հավասարակշռության հիմնախնդիրը Մեծ Հայքում: Մաս III. Համասեռ հավասարակշռության պահպանման ճիգը Արտավազդ II-ի դարաշրջանում, էջ 55:

117 Տե՛ս Ա. Փ. Лосев, Музыка, Мифы народов мира, т.2, Москва, 1987, с.177-179.

118 Տե՛ս А. А. Степанян, Развитие исторической мысли, с.12-127.

նկատմամբ չնչին էին, ուստի տրվել էր տեսական կենսակերպին: Յուրացրել էր հելլենիստական իմաստասիրությունը և ճարտասանությունը, պոետիկան և պատմագրությունը: Հեղինակել էր տարաբնույթ ստեղծագործություններ, որոնց մի մասը պահպանվել էր հունական մտավոր միջավայրում՝ իր մահից տակավին հարյուր-հարյուր հիսուն տարի անց[Plut., Crass., XXXIII, 2]:

Արդյոք արքունի այս տեսլականով չէր առաջնորդվում Գ. Պոնապետը՝ վերադառնալով Արևելքից Հռոմ: Հանդիպելով Ծերակույտի ու ամբոխի կապաղի դիմադրությանը՝ նա չբրվեց բանակի ստարամամբ Հռոմում բռնապիրություն հաստատելու պայքարներին: Այլ ընդհանրապես «հանրապետական միապետության» գաղափարի շուրջ հռոմեական հանրույթը միավորելու դժվարին ուղին: Անուսնացավ Կեսարի դեռառի դարեր՝ Հուլիայի հետ, և Քաղաքից դուրս՝ Ալեքսանդրի բրի վրա, կառուցեց շքեղ մի դղյակ՝ պալատ, թափրոն, այգի: Ուսյալ փրորուհու հրավերքով հավաքվում էին նշանավոր մտավորականները: Ասք Պոնապետան ապրում էր հայեցողական կյանքով (otium): Սակայն գալով Քաղաք՝ փրվում էր գործնական կյանքին (negotium)՝ Ծերակույտ, Փորոն, Բանակ¹¹⁹:

Ի տարբերություն կանանց հարկաբաժնի՝ արանց հակաբաժինը **գործնական կենսակերպի** միջավայր էր (βίος πρακτικός): Աստ արքան էր և իր վարչակազմը, որոնց մասին խոսք եղավ վերը: Հասարակական մտակեցվածքում գործնական կենսակերպը անհամեմատ ավելի բարձր էր գնահատվում: Ենթադրելի է, նման մոտեցումն աղերսներ ուներ զրադաշտական արժեքանության հետ: Հայտնի է, դրա ծիրում կյանքը ներկայանում է իր երկու հակադիր դրսևորմամբ՝ մտահոգևոր (menog) և նյութական (getig): Կազմակերպված ըստ բարի մտքի և բարի խոսքի՝ նյութականը համարվում էր կեցության ճշմարիտ նպատակը¹²⁰: Գոյակարգի անդրադարձով այդ անցումը ցուանում էր իբրև **էջք**՝ մտավոր տիեզերքից դեպի նյութական աշխարհ¹²¹:

Անտարակույս, արքունի երկու հարկաբաժինները գործառում էին փոխարացման խաղընթացով: Եվ անցումը մեկից դեպի մյուսը միանգամայն բնական էր: Այս կապակցությամբ, կարծում ենք, հատկանշելի է Ստրաբոնի մի բանաձև, որը վերաբերում է Մեթրոդորոս Սկեփսացուն: Համաձայն դրա՝ վերջինս պոնտական արքունիքում անցում էր կատարել իմաստասիրությունից գործնական կենսակերպի (ἐκ τοῦ φιλοσόφου ἐπὶ βίον πρακτικόν) [Strabo, XIII, I, 55]¹²²: Հայսմ արքայի և տիկնանց տիկնոջ սրբազան ամուսնությանը նոր երանգ է հավելվում:

Արքունիքի կարևոր բևեռներից էր գահաժառանգը: Արդեն հատկանշել ենք, իր գահակիր ծնողներին առընթեր նա մասնակցում էր գերագույն իշխանությանը: Եվ մասնակցության աստիճանը, հարկավ, պայմանավորված էր կոնկրետ իրավիճակից և հարաբերություններից: Թերևս նա նույնպես անցնում էր նվիրագործությունների միջով և հայր արքայից ստանում թագի մի յուրահատուկ տեսակ, որն Ապիանոսն անվանում է պսակ (στέφανος) [App., Mithr., 104]: Կասկած չկա, դա ավելի բարձր կարգի էր, քան այն պսակները, որ կրում էին արքայի

119 Տե՛ս B. Rawson, The Politics of Friendship. Pompey and Cicero, Sydney, pp.74-77. 268 p.

120 Տե՛ս M. Boyce, Zoroastrians. Their Religious Beliefs and Practices, New York, 2001, p.25.

121 Տե՛ս P. Du Breuil, Zarathoustra et la transfiguration du monde, Paris, 1978, pp.90-91.

122 Տե՛ս A. A. Степанян, Развитие исторической мысли, с.12-133. Այս անցումը ստրիկյան իմաստասիրության մեջ նկատվում էր «ցանկալի» գործընթաց: Ձի իմաստուն այրը հնարավորություն էր ստանում համաբերել այլոց կյանքն ըստ բնության կարգի: Այդուհանդերձ, հայեցողական կենսակերպը ստրիկները համարում էին գերապատվելի: B. K. Balot, Greek Political Thought, Oxford, 2006, p.288.

մերձավորագույն անձինք [Խոր., II,47,3-5]: Հուսկ կարելի է անգամ ենթադրել, թե թագաժառանգն այդ «պսակավորների» առաջնորդն էր¹²³: Ենթադրելի է, որ նրան ի կառավարումն հանձնվում էր Վասպուրականը (Vaspurakan)¹²⁴:

Առկա փաստական նյութը վկայում է, որ արքայի և թագաժառանգի հարաբերությունները միշտ չէ, որ հարթ ընթացք ունեին: Տիգրան II-ն, օրինակ, թագաժառանգներից երկուսին մահվան է դատապարտել, իսկ երրորդին (Տիգրան Կրտսեր) համաձայնել է հանձնել հռոմեացիներին ի գերություն: Պատճառը պայքարն էր իշխանության համար, հրնթացս որի թագաժառանգների թիկունքին կանգնած էր ընդդիմադիր (տոհմիկ) ավագանին: Թերևս դա էր պատճառը, որ արքան խուսափում էր նրանց կարևոր գործեր ու գործակալություններ հանձնարարել: Անտիկ սկզբնաղբյուրները որևէ վկայություն չունեն Տերության կայացման և կառավարման գործում նրանց մասնակցության մասին¹²⁵:

Հավելենք մի քանի խոսք արքայադուստրերի մասին: Նրանք նույնպես տարբերվում էին միմյանցից՝ կախված իրենց մայրերի ամուսնական կարգավիճակից: Այս մասին, սակայն, սկզբնաղբյուրներն էական ոչինչ չեն հաղորդում: Վիճակը փոքր-ինչ բարվոք է առաջին տիկնոջից ծնված արքայադուստրերի պարագային: Տեղեկույթ ունենք Տիգրան II-ի երեք դուստրերի նման կարգավիճակի մասին: Առաջինը (Աուտոմա-Արիագատ) ամուսնացած էր պարթև Միհրդատ II-ի, երկրորդը՝ Ատրպատականի արքա Միհրդատի, երրորդը՝ պարթև թագաժառանգ Բակուրի հետ: Նրանք «դիվանագիտական գործիք» էին հարևան պետությունների հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու և պահպանելու համար: Պատմական փաստերը վկայում են, որ այս հարաբերությունների պարագծում ներգրավված էին նաև Պոնտոսը, Կասպադովկիան, Վիրքը և (թերևս) Աղվանքը: Շատ դեպքերում հայոց արքայադուստրերը շարունակում էին սերտ կապերն իրենց ազնատական խմբի հետ: Կարծում ենք, հենց դա էլ իրավական հիմք էր տալիս նրանց զավակներին ճգնաժամի պահին հավակնելու Արտաշիսյան գահին¹²⁶: Ի շարս դրանց՝ Զ.հ. I դարի սկզբին հանդես եկան մախ՝ Ատրպատականի արքայատան ներկայացուցիչները (Արտավազդ, Արիոբարզան), ապա (կասպադովկական միջնորդությամբ)՝ ոմն հրեա արքայազն (Տիգրան V): Ապա՝ պոնտական արքայազն Ջենոնը: Իսկ 30-ականների երկրորդ կեսից մինչև 50-ականների սկիզբը՝ վրաց արքայազույնները (Միհրդատ, Հռադամիզդ): Կրկենք մեկ անգամ էլ Արտաշիսյանները գերակա իրավական կարգավիճակ ունեին այն տարածաշրջանում, որը ծավալվում էր Կովկասյան լեռներից մինչև Հյուսիսային Միջագետք:

Ամփոփում: Արտաշիսյան արքունիքն ուրույն ընկերական միջավայր էր՝ կապող օղակ արքայական իշխանության և հայոց ընկերային համակեցության

123 Այս առումով նույնպես Արտաշիսյաններն ավելի մոտ էին Աքեմենյաններին: Մոտ էին ի տարբերություն պարթև Արշակունիների, որոնց միջավայրում բացակայում էր գահաժառանգման կայուն կարգը: Դա շատ հաճախ հանգեցնում էր լարված պայքարի, որի բևեռներից մեկն էլ արքունի կանանց հարկաբաժինն էր: Տե՛ս **I. Huber**, op. cit., S. 494.

124 Տե՛ս **А. Г. Периханян**, Древнеармянские востаники, с.52.

125 Բացառություն է Ուշ բաբելոնյան մի արձանագրություն (Ք.ա. 82 թ.), որտեղ խոսվում է Գայի արքայի որդի Տիգրանի մասին, ով արշավել է Գյուսիսային Միջագետք: Տե՛ս **Г. Х. Саркисян**, Свидетельство позднеавиловской клинописной хроноки об Армении времен Тиграна II, с.192-194: Այս և նման այլ փորձերի արդյունքներն ինչ-ինչ պատճառով թերևս չէին գոհացրել հայր արքային: Ուստի հարմար էր գտել որդիներին հեռու պահել իրական իշխանությունից:

126 Նման պատկերացումները պահպանվել են վաղ վրացական պատմական ավանդույթում: Տե՛ս **С. Toumanoff**, op. cit., p. 81.

միջև: Ներքին և արտաքին արքունիքների համակենտրոն բոլորակների տեսքով այդ կապը տարածվում էր Մեծ Հայքով մեկ: Կենտրոնում արքան էր, իսկ նրան ընդդեմ՝ ծայրամասը: Երկու բևեռ, որոնցից առաջինը ձգտում էր բացարձակ միաշափության, իսկ երկրորդը՝ (քառսին սահմանակցող) բազմաշափության: Արքունիքի խնդիրն էր լռեցնել այդ իրական կամ հնարավոր ծայրահեղությունները՝ օգտագործելով կրոնաքարիզմատիկ, պաշտոնեական, մշակութային և այլ բնույթի խթաններ:

Միջակա դիրքի տրամաբանությամբ՝ արքունիքը և՛ միասեռ-միաշափ էր, և՛ տարասեռ-բազմաշափ: Ասվածը նախ և առաջ արտահայտվում էր նրա կառույցի և գործառույթի մեջ, զի պարառում էր միաժամանակ արքայի տունը և երկրի կառավարությունը: Հավելենք դրան, որ արքունիքը կազմավորվում էր ըստ ծագումնաբանության և արհեստավարժության հակոտնյա սկզբունքների: Համապատասխանաբար՝ նրանում առկա էր ավագանու երկու խմբավորում՝ տոհմիկ և ծառայողական: Առաջինը կապված էր հայոց համակեցության ավանդական (նահապետական) կառույցներին, իսկ երկրորդը՝ քաղաքային կյանքին ու կենցաղին: Առաջինի քաղաքական տեսլականը համեմատաբար թույլ կենտրոնացած (քարիզմատիկ) միապետությունն էր, երկրորդինը՝ կենտրոնաձիգ (բացարձակության ձգտող) պաշտոնեական միապետությունը: Առաջինի քաղաքական ազդեցության կարևորագույն օրգանը սրբազան Նպատի լանջերին պարբերաբար հրավիրվող Աշխարհաժողովն էր, երկրորդինը՝ մայրաքաղաք Արտաշատի Հրապարակը: Տարբեր էին նաև նրանց մշակութային կողմնորոշումները: Տոհմիկների նախընտրությունները լծողված էին առասպելի և ասքի արժեհամակարգին: Մինչդեռ արհեստավարժները նախընտրում էին հելլենիստական գրականությունը, թատրոնը, իմաստասիրությունը, ճարտասանությունը: Ենթադրելի է նաև՝ հագուստը, ուտեստը, զվարճանքներն ու առօրյան:

Իր հավասարակշռող դերակատարությունն արքունիքն առավելագույնս իրագործում էր, երբ նրա հակոտնյա բևեռների միջև առկա էր ճկուն համամասնություն: Սակայն այդ իրավիճակը դժվար հասանելի էր, զի բացի «խաղի կանոններից», արքունիքում շատ բան կախված էր բանսարկությունից, քծնանքից, խարդավանքից: Ժամանակ առ ժամանակ դրանք ծնունդ էին տալիս դավադրությունների, որպիսիք առիթ ենք ունեցել դիտարկելու Տիգրան II-ի, Արտավազդ II-ի, Արտաշես II-ի գահակալության ընթացքին:

Տիգրան II-ի դարաշրջանում, Տերության կազմավորման և ծավալման պայմաններում ծառայողական ավագանին հասավ աներկբա գերակայության: Սակայն դա երկար չտևեց. ի հետևանս Տերության անկման և երկրում ծայր առած տնտեսական փլուզման՝ իրադրությունը փոխվեց հօգուտ տոհմիկների: Գալխանգարեց, որպեսզի Մեծ Հայքի ինքնիշխանությանը սպառնացող վտանգի պահին (Ք. հ. I դ. սկիզբ) նրանք հանդես գան միակամ: Ավելի քան մեկ տասնամյակ արքայի բացակայությամբ արքունիքը կառավարեց Մեծ Հայքը՝ մերժելով թե՛ Հռոմի, թե՛ Պարթևստանի թեկնածուներին: Փոխարենը նախապատրաստեց և գահ բարձրացրեց իր թեկնածու Չենոն-Արտաշեսին:

Գերակայում էր ազգային ինքնության այն ընկալումը, որի սերմերը ցանվել էին տակավին Արտաշես I-ի ձեռամբ¹²⁷: Եվ այդ հիմամբ արքունիքը ներկայանում

127 Տե՛ս **А. А. Степанян**, *Метаморфозы цивилизационной идентичности древних армян, Армения в диалоге цивилизаций (Материалы международной конференции)*, Нижний Новгород, 2011, с. 151-152.

ՊԱՏԱՌԹՅՈՒՆ
Գ. (Թ) ԳԱՐԻ, ՔԻՎ 4 (36) ԽՈՒՄԵՆԻԵՐ-ՆԵԿԿՐԵՆԵՐ, 2011
ՎԵՄ համահայկական հանդես

Էր իբրև ազգային պատմության ուրույն գործող անձ կամ հերոս: Եվ նրա գործունեությունը, ձերբազատվելով ժամանակի առտնին-կարճ տևողությունից, ծավալվում էր երկար տևողությունների տիրույթում: Այլորեն ստանում էր հիրավի՝ քաղաքակրթական իմաստ և բովանդակություն:

Summary

THE PROBLEM OF CIVILIZATION HOMEOSTASIS IN GREAT ARMENIA

The Court Society of the Artaxiads (structure, function semiotics)

Albert A. Stepanyan

The paper looks at one of the crucial aspects of modern historical sociology developed thanks to the pioneering works of N. Elias and his followers in the last decades. It deals with the problem of social networks in various historical ages and environments from antiquity to our days.

The experience of the Achaemenians and Seleucids are of undoubted importance for the purpose of the paper. Therefore, they are examined with scrutiny. Their parallels are useful in establishing the structure, function and ideology of the court society of Hellenistic Great Armenia.

In this light, the inner and outer courts of Artaxiads have been taken as the main focus of discussion. The said concerns particularly the two opposite sections of Armenian nobility; one represented the tribal (dynastic), the other the bureaucratic aristocracy. They had various political ideals. For the dynasts a less centralized state was perspective. And they looked at the Parthian state as an acceptable model. As to the bureaucratic nobility, it was in favor of a centralized state and found its ideal in Rome. Artaxiad kings balanced between these two wings guaranteeing homeostasis of Great Armenia.

Armenian aristocracy and court society accumulated the core values of national identity. And in crucial points of history, it acted unanimously in accordance with the interests of national security.